Է. ՏԱՐԻ 2028 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 10 ՍԱՀՄԻ 4383—Հ. Տ. 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890—Ն. Տ. 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890—ՀԻՃՐ. 16 ՐԷՊԻՒԼ ԷՎՎԷԼ 1308 — ՈՒՐԲԱԹ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՂՐԿԵԼ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌ولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradoughian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան ղահեկան արծաթ	160
» »	Վեցամսեայ » »	80
» »	Եռամսեայ » »	40
Գաւառաց »	Տարեկան » »	200
» »	Վեցամսեայ » »	100
Օտար երկիրներու	տարեկան ֆրանք	56
» »	վեցամսեայ »	28

Դուրս ղրկուած լրագրաց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Սերպիոյ մէջ մաս մը արմատական երեսփոխաններ պիտի առաջարկեն Սքուփչինային որ Սահմանադրութեան 70րդ յօդուածը փոփոխելով, նոր կերպիւ մը կարգադրուին յարաբերութիւնք Միլան Թագաւորին իւր որդւոյն հետ, որպէս զի այս կողմէ նորանոր խնդիրներ չծագին։ Նոյն կուսակցութեան ուրիշ երեսփոխաններ ալ կ'առաջարկեն Խորհրդարանին՝ ջնջումն 1868ի օրէնքին, որով բովանդակ Քարաճորճեւիչեան գերդաստանն արտաքսուած է Սերպիայէն։ Սերպ նախարարութիւնն այս խնդիրները խառնելու համամիտ չի գտնուիր։ Բայց գոհացում տալու համար այդ կուսակցութեան, կարգ մը սպայներ պաշտօնանկ պիտի լինին, որք չափէն աւելի յարեալ են եղեր նախորդ վարչութեան։

Ուրիշ նկատմամբք սերպ բանակին վիճակը գոհացուցիչ կը նկարագրուի։ Պատերազմական նախարարին մատուցեալ տեղեկագրէ մը կ'երեւի թէ 60,000 սերպ զօրաց փորձի համար ի զէն կոչուիլը կատարելապէս յաջողեր է։ Քառասուն հազար Պէրտանի հրացաններ պիտի բաշխուին Բ. և Գ. կարգի պահեստի զօրաց, որք լաւ վարժուած են կ'ըսուի։ Սերպ հեծելազօրաց նիզակ բաշխուեցաւ ռուսական ձեւով։ Ոչ-պաշտօնական սպայից համար մասնաւոր կրթարան մը բացուեցաւ ի Պելկրատ, և 200 երիտասարդք ընդունուեցան։

Սերպ նախարարութիւնն Սքուփչինայէն պիտի խնդրէ օրէնքի մը հաստատումն որով պիտի պատժուին բարեկամ Տէրութեանց դէմ յարձակող սերպ լրագիրք։ Այս առաջարկ ուղղեալ է այն խմբագրաց դէմ որք բան գործ բռնած են Աւստրիո-Հունգարիոյ դէմ գրել, դժուար կացութեան մէջ թողլով սերպ կառավարութիւնը դրացի մեծ Տէրութեան առջեւ։ Այժմեան լրագրական օրինօք կառավարութիւնը բան մը չի կրնար ընել. ուստի, նոր իշխանութիւն կը խնդրէ Ազգային Ժողովէն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Պ. Կլատսթոն ի Տալքիթ բանախօսելով, ըսաւ թէ Սկովտիա եւս Իռլանտայի և Կալլէսի պէս իրաւունք ունի խնդրելու որ իւր ներքին գործերն ուրոյն Խորհրդարանով մը անօրինէ, որով Լոնտոնի կեդրոնական Խորհրդարանին վրայէն սկովտիական գործերու բեռն եւս կը վերնայ։ Թէեւ Սկովտիոյ մէջ տակաւին խնդիրը սաստիկ հանգամանք մը չէ առած, բայց այն դատ Սկովտիոյ մէջ կայ և պիտի մնայ։ Անգլիոյ հետ իւր վարչային միութենէն Սկովտիա մեծապէս օգտուած է, և Անգլիա Իռլանտայի զգացումներն առաւել փոխելուն պէս Սկովտիոյ զգացումներն եւս չէ արհամարհած։ Այնու հանդերձ, Սկովտիոյ տեղային շահեր Լոնտոնի Խորհրդարանին մէջ ըստ արժանւոյն չեն պաշտպանուիր։ Իռլանտայի և Կալլէսի մէջ տեղային Խորհրդարաններ ու վարչութիւններ կազմելու առաջարկը կը պատշաճի Սկովտիոյ եւս։ Պ. Կլատսթոն ապահով է թէ Սկովտացիք իրենց պահանջումները չափաւոր և բանաւոր ձեւով պիտի ներկայացնեն կեդրոնական Խորհրդարանին, համաձայն պետական միութեան աւանդութեանց, և Լոնտոնի Խորհրդարանն եւս անշուշտ բարեացակամ ոգւով պիտի ընդունի և կը քննէ Սկովտիոյ խնդիրքն։

Ինչպէս կ'երեւի, Պ. Կլատսթոն խնդիրը կ'ընդարձակէ, և Իռլանտայի պահանջումներն ընդունելի կը նկատէ ո՛չ միայն Իռլանտայի այլ և Կալլէսի և Սկովտիոյ նկատմամբ։

Պ. Կլատսթոն Սկովտիոյ կրօնական խնդրոյ վրայ եւս խօսեցաւ, այսինքն՝ թէ պէ՞տք է Սկովտիոյ «հաստատեալ» կամ «պետական» երիցական Եկեղեցին բառնալ՝ խզելով կառավարութեան և այն բողոքական Եկեղեցւոյն միջեւ նիւթական և բարոյական ամեն կապ և յարաբերութիւն։ Քրօֆթըր կոչուած փոքր վարձակալ մշակներուն ողբալի վիճակը նկարագրելով, պնդեց թէ Խորհրդարանն ստիպողաբար պէտք է պարապի դարման տանիլ ադոր։

ՌՈՒՄԱՆՔ ԵՒ ՄԱՃԱՌՔ

Անցեալները ծանուցինք թէ Թրանսիլվանիոյ Ռումանք որոշած են մեծ ժողով մը կազմել ի Հէրմանշթատ, իրենց ընդհանուր կացութեան վրայ խորհելու և այն կացութեան բարւոքման համար առաջարկներ պատրաստելու։ Հեռագիրք կը ծանուցանեն թէ այս ժողով գումարուած է յիշեալ քաղաքին մէջ, և Թրանսիլվանիոյ Ռումանաց վիճակը նկարագրող և դարմաններ առաջարկող ընդարձակ յիշատակագիր մը խմբագրած է, յորում կը գանգատուի թէ ռումեն նոր սերնդեան իւր մայրենի ռումաներէն լեզուաւ դաստիարակման թոյլ չեն տար մաճառ իշխանութիւնք, եւ զանազան դժուարութիւնք կը յարուցեն։ Ընտրութեանց ազատութիւնն եւս կը խափանուի։ Մաճառ լրագրութիւնը Ռումանները կասկածելի կը ցուցնէ։ Այս տեղեկագիրը պատրաստող պատուիրակը դիտել տուած է նաեւ թէ Մաճառստանի հպատակ Ռումանք օտարներուն (Ռումանիոյ թագաւորութեան) չեն յարիր, այլ հաւատարիմ կուսակից են Աւստրիո-Հունգարիոյ և Հապսպուրկեան Տէրութեան։ Ժողովն այս յայտարարութիւնն և տեղեկագիրը միահամուռ ընդունելով, փափաք յայտնած է որ քաղաքական, առեւտրական և զինուորական սերտ բարեկամութիւն հաստատուի Ռումանիոյ եւ Աւստրիո-Հունգարիոյ միջեւ։

ՌՈՒՍ ՎԱՐԺԱՐԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Եգիպտոսի մէջ ռուսական վարժարան մը կայ, շատ տարիներ յառաջ հաստատեալ ի ձեռն հանգուցեալ Պ. Ա. Նորովի, նախկին կրթական նախարար Ռուսիոյ։ Այն ժամանակ ռուսահպատակ Արաբ մը Գահիրէի մէջ ռուսական վարժարանի հաստատման համար ընդարձակ բնակարան և մեծաքանակ գումար մը նուիրած էր։ Նորով ընդունեց այս նուէր, և յօրէ անտի դպրոցը բաց կը մնայ, ընդ պաշտպանութեամբ Ռուսիոյ կայսեր և վերին տնօրինութեամբ Ռուսիոյ կրթական նախարարին։ Իբր երկու հարիւր փոքրիկ Արաբներ ռուսերէն կ'ուսանին և ձրի կը ճաշեն։ Այժմ նոյն դպրոցին ուսմանց յայտագիրը կ'ընդարձակուի այնպէս որ լաւագոյն աշակերտք կարենան իրենց դաստիարակութիւնն յառաջ տանիլ Ռուսիոյ մէջ։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Ի Նիւ-Օրլէանս, սաստիկ հակակրութիւն կայ ամերիկացի ժողովրդեան և իտալացի գաղթականաց միջեւ։ Յայտնի է թէ այս քաղաքի մէջ իտալացի վրէժխնդիր չարագործաց ոմանց ոճիրներուն հետեւանօք մեծ խնդիր մը ծագած է, և շատ Ամերիկացիք կը պահանջեն որ կառավարութիւնն այլ եւս իտալացի գաղթականներ չընդունի ի Միացեալ Նահանգս։ Նիւ-Օրլէանսի Ամերիկացւոց մէջ յանձնաժողով մը կազմուած է որպէս զի թոյլ չտայ նոր իտալացի գաղթականաց հաստատման այն քաղաքի մէջ և ի շրջակայս, և այս մարմնոյ և իտալական մարմնոյն հակառակութիւնն օրըստօրէ մեծ խնդիրն է դարձած։ Իտալացիք խմբովին կը գաղթեն Նիւ-Օրլէանսէն։ Ժամբոյն գտնուող և յԱմերիկա իտալացի գաղթական բերող քանի մը շոգենաւերէն Իտալացւոց դուրս ելնելուն ընդդիմանալու պատրաստութիւնք կը կատարուին։ Այս ժողովրդային գանգատանաց առջեւ, Ուաշինկթընի կառավարութիւնը նոր օրէնք մը դրաւ, որով հին Աշխարհին մէջ ո՛ և է ժամանակ ոճրի մը համար դատապարտութիւն կրած մարդոց յԱմերիկա ընդունելութիւնը կ'արգիլէ բացարձակ։

Ի ՔԱՆԱՏԱ

Ի Մոնրէալ չորս հարիւր հրաւիրեալք ներկայ էին ի պատիւ Փարիզի կոմսին իւր ֆրանսացի ազգակցաց կողմէ տրուած հացկերոյթին։ Քաղաքապետը, քաղաքային խորհրդականք և քաղաքին ամեն երեւելիք ներկայ էին։ Ի պատիւ իրեն առաջարկեալ ճառին ի պատասխանի, Փարիզի կոմսը շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած մեծ պատիւներուն համար։ Ըսաւ թէ ո՛րչափ կը սքանչանայ ֆրանսական ցեղին Քանատայի մէջ ծաւալման եւ յառաջդիմութեան։ Քանատացիք աւանդապահ ժողովուրդ մ'են, և իրենց հարց կրօնին և սկզբանց հաւատարիմ մնացած են։ Այս աւանդապահութեան մէջ Փարիզի կոմսը կը տեսնէ Քանատայի ֆրանսական տարրին զարմանալի յառաջդիմութեան գաղտնիքն։ Ի վերջոյ Փարիզի կոմսը բաժակ առաջարկեց Վիքթորիա Թագուհւոյն կենաց, և ի պատիւ Քանատայի բարգաւաճման։ Հանրապետական գաղափարներ տածող Քանատացի Ֆրանսացիք նոյն օր իբր հազար ստորագրութեամբ ուղերձ մը հեռագրեցին առ Պ. Քառնօ, որով ջերմ համակրութիւն կը յայտնեն Ֆրանսայի և իւր արդի դրութեանց նկատմամբ։

Պ. ՍԹԷՆԼԻ Յ'ԱՄԵՐԻԿԱ

Պ. Սթէնլի Նիւ Եորք կ'երթայ, ուր բանախօսութիւն մը պիտի ընէ յօգուտ հիւանդանոցի մը։ Զինք լսել փափաքողներու թիւն այնքան մեծ է որ օթեակներն և թիկնաթոռներն աճուրդի դրուեցան։ Ահա՛ ամերիկեան գաղափար մ'ալ։ Կը կարծուի թէ ո՛չ մէկ օթեակ, որչափ ալ յետին, 500 ֆրանքէն պակաս չպիտի բռնուի, և Նիւ Եորքի Օփերան, ուր պիտի խօսի Պ. Սթէնլի, տեսակին մէջ շատ ընդարձակ շէնք մ'է։ Պ. Սթէնլիի բնաբանն է. «Ազատումն Էմին փաշայի. Թզուկներուն անտառն. Ափրիկէի մէջէն յառաջխաղացութիւն մը»։

ԱՀԱՒԵԼԻ ԱՐԿԱԾ

Ի Քանթօն, չինական կառավարութեան վառօդարանն արկածով մը պայթեցաւ։ Երկու հարիւր տուներ ծանրապէս վնասեցան կամ խորտակեցան, և հազար անձինք մեռան։ Շատեր ալ վիրաւորեցան։

Ի ՊԵՐԼԻՆ

Ի Պերլին օրուան մեծ խնդիրը Մոլթքէ Մարեշալին փառաւորումէն ետքը, թատերական գրաքննութեան մէկ վճիռն է, որով գերման յաջողակ թատրերգակ Պ. Սուտէրմանի յօրինած Վերջ Սոդոմի անուն թատրերգութեան ներկայացումն արգիլեց, յայտարարելով թէ իրապաշտական կամ զոլայական հակումներ ունեցող գրուածներն ամենեւին չի կրնար ընդունիլ գերմանական թատերաբեմերու վրայ։

—Հանգուցեալ Մարեշալ Ֆոն Մոլթքէյի ամեն գոյք և ստացուածք այս օրերս աճուրդի կը հանուին՝ իւր ժառանգորդաց սնանկ հռչակուելուն պատճառաւ։ Այդ գոյից մէջ աճուրդի կը հանուին նաեւ ի պատիւ իւր ծառայութեանց իրեն տրուած թանկագին ընծայներ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Լամարթինի յիշատակն այս օրերս մեծապէս կը փառաւորուի Ֆրանսայի մէջ, Մաքոն քաղաքին մէջ իւր ծննդեան հարիւրամեակին տօնուելուն առթիւ, որ պահ մը բովանդակ Ֆրանսայի ուշադրութիւնը դէպ այն կողմ դարձուց։ Կրթական նախարարը, Պ. Ժիւլ Սիմոն և այլ ականաւոր գրագէտք և քաղաքագէտք այս առթիւ գովեստիւք յիշեցին Լամարթինի բանաստեղծական հանճար, և քաղաքական գործունէութիւնն, որով 1848ի յեղափոխութեան ետքը կազմել Երկրորդ և սակաւակեաց Հանրապետութեան վարիչներէն մին եղաւ։

Բայց Լամարթին մեծ մարդասէր մ'էր միանգամայն։ Պ. Ժիւլ Սիմոն պատմեց թէ Լամարթին բաց կառքով պտըտելու ջերմ փափաք ունէր, Վիքթոր Հիւկոյի նման։ Լամարթին կ'ուզէ փոքր կառք մը գնել, անտառը պտոյտի երթալու համար մերթ ընդ մերթ։ Երեք հազար ֆրանք պէտք էր այսպիսի կառք մը գնելու։ Բանաստեղծը կը սկսի քիչ քիչ խնայելով մի կողմ դնել այս գումար։ Երեք հազար ֆրանքն ամբողջանալու վրայ էր երբ օր մը կուգայ կը ներկայանայ իրեն անծանօթ խեղճ այրի կին մը, որ այրի կիներուն սրտաշարժ պատմութիւնը կ'ընէ։— Այրն առանց ապրուստի թողած էր զինք երեք զաւակներուն հետ, և ինք հարկադրեալ էր պարկեշտ աշխատութեամբ իւր և զաւակաց օրապահիկը ճարել։ Վարժուած էր վայելուչ կեանք մը վարելու։ Քիչ մը կար և դաշնակ միայն գիտէր։ Կինը լացաւ։ Բանաստեղծ—քաղաքագէտն յուզուեցաւ։ Կրնար խանութ մը բանալ, բայց դրամագլուխ կը կարօտէր։ Հանգանակութիւն մը պէտք էր, և առաջին անգամ նոյն ինքն առ Լամարթին կը դիմէր։ Իւր կեանքին մէջ երբեք այս կարօտեալ վիճակով մարդու չէր դիմած։ «Ո՞րչափ գումարի կը կարօտիք», կը հարցունէ Լամարթին։—«Հազար ֆրանք»։— Լամարթին դրասեղանին քով կ'երթայ, կը հանէ հազար ֆրանք և կու տայ կնոջ, որ այնքան բարեսրտութեան, այնքան բարեբախտութեան չէր կրնար հաւատալ։ — «Հօրեղբա՛յր, հապա կա՞ռքը», կը հարցունէ անդիէն փոքրիկ աղջիկ մը։—«Սիրելի զաւակս, քալելով կ'երթանք անտառ»։ —«Եւ ո՞րչափ ուրախութեամբ», կը պատասխանէ բարեսիրտ աղջիկը։

Բանաստեղծ մը կը գրէ առ Լամարթին՝ խնդրելով որ իւր գործոց ձօնն ընդունի։ Լամարթին ձեռագիրը կ'ուզէ տեսնել։ Բանաստեղծը կուգայ։ [illegible] մէկը չէր։ Գրուածին մէջ տեղ տեղ հոգի կար, իմաստ կար։ Կարդալով հանդերձ, Լամարթին աչքին ծայրով հեղինակը կը դիտէ, որ մարմնացեալ թշուառութիւն էր։ Հագուստ չունէր։ Հաւանօրէն հաց ալ չունէր։ «Կ'ընդունիմ ձօնն, և ձեր գրքին առաջին օրինակներուն համար ալ կը ստորագրուիմ»։ Իբրեւ կանխավճար, քանի մ' ոսկի կը դնէ բանաստեղծին ձեռաց մէջ, որ չի գիտեր ի՛նչպէս շնորհակալութիւն յայտնէ։ Լամարթին կ'առաջնորդէ զնա մինչեւ նախասենեակ։ Ձմեռ էր։ Խեղճ մարդն ամառուան կարճ թիկնոցակ մը հագած էր հինցած և տեղ տեղ կարկատուած, որ ցուրտին դէմ չէր կրնար պաշտպանել զինք։ Լամարթին իւր նոր վերարկուն կ'առնու, որ կախուած էր հոն, և այցելուին ուսերուն վրայ կը դնէ իւր ձեռօք, ըսելով. «Ձեր վերարկուն հոս կը մոռնաք»։— «Իմս չէ», կը պատասխանէ անմեղ որդին Մուսայից։— «Բայց ձերը պէտք է ըլլայ, քանի որ իմս չէ այլ եւս»,—կը յարէ Լամարթին։

Ի ՓԱՐԻԶ

Հոկտ. 23ի գիշերն ի Փարիզ Փորթ Սէն Մարթէնի թատրոնին մէջ մեծ յաջողութիւն ունեցաւ Պ. Վիքթորիէն Սարտուի Պ. Էմիլ Մօռոյի հետ գործակցութեամբ յօրինած մեծահանդէս թատրերգութիւնն Կլէոպատրա։ Սառա Պէրնառ կը ներկայացնէր Եգիպտոսի անուանի Թագուհին։ Ամեն դարուց մէջ այդ կին մեծապէս շահագրգռած է պատմաբանները, քննադատներն ու բանաստեղծներն, և Կլէոպատրայի անուան շուրջ ընդարձակ գրականութիւն մը կազմուած է։ Յայտնի է հին պատմութեան վրայ տարրական գաղափար ունեցողներուն թէ Քրիստոսէն կէս դար յառաջ, Մարկոս Անտոնիոս, Հռոմայ եռապետներէն մին, զՏարոն նուաճելով, կը հրաւիրէ Եգիպտոսի Թագուհին հպատակութիւն յայտնելու, և ի հակառակ դէպս կը սպառնայ թրէ անցունել բոլոր երեւելիները։ Վերջին վայրկենին, երբ ընդհանուր ջարդի հրամանը պիտի տրուէր, կուգայ կը հասնի իւր գեղեցկութեամբ և ճարպիկութեամբ մեծահամբաւ մեծափարթամ Թագուհին, նաւով մը որոյ առագաստները բեհեզեայ էին, որոյ առջեւը կամ ցռուկն համակ ոսկեղէն, և որ կիներով և անուշահոտութեամբք լի էր։ Ո՛չ թէ իբրեւ գերի այլ իբրեւ ճշմարիտ վեհապետուհի կը ներկայանար Կլէոպատրա, ադամանդներով ծածկուած, ամեն ժամանակէ աւելի գեղանի և հրապուրիչ։ Եւ իրօք կը հրապուրէ եռապետն, որ մոռցեալ խստութիւններն ի բաց թողլով, նաեւ կը նստի Թագուհւոյն հետ, և Աղեքսանդրիա կ'ուղեւորի, ի Մեմփիս իւր այս նոր յաղթութիւնը վայելելու հեշտութեանց մէջ։ Կլէոպատրա յօգուտ իւր Տէրութեան հրապուրել ետքն զՄարկոս Անտոնիոս, ինքն եւս անկեղծապէս կը սիրէ զնա, և կ'երեւակայէ թէ անկէ չպիտի կրնայ բաժնուիլ։ Բայց ահա՛ լուր կուգայ թէ Հռոմայ Տէրութիւնն և Անտոնիոսի դիրքը վտանգի մէջ են։—Իւր սիրահարին ա՞նձը թէ փառքը խնդրէ Կլէոպատրա, այսինքն՝ վա՞ր դնէ զնա թէ թողու որ երթայ փրկել Տէրութիւնն եւ վերահաստատել իւր փառքը։ Կը վարանի, բայց կ'որոշէ Անտոնիոս պէ՛տք է մեկնի։ Ի Հռոմ Անտոնիոս կը մեկնի, Թագուհին սուրհանդակ կը ղրկէ իւր սիրահարէն լուր բերելու։ Երկու ամիսէն կուգայ սուրհանդակն։ Անհամբեր է Թագուհին։ — Ի՞նչ լուր։—Սուրհանդակը չի համարձակիր խօսիլ։—Անտոնիոս, իւր դիրքը չկորուսանելու համար, քաղաքային պատերազմին առաջքն առնելու համար, կ'ամուսնանայ միւս եռապետին՝ Ոկտաւիոսի քրոջ՝ Ոկտաւիայի հետ։ Աննկարագրելի է Կլէոպատրայի յուսահատութիւնն։ Նա՛ ահա նո՛ր սուրհանդակ, այս անգամ Անտոնիոսէ։— «Սպառազինէ՛ քու նաւատորմդ և եկ յԱկտիոն», կը հրճուի Կլէոպատրա. զի նիւթապէս օգնելով իւր նախկին սիրահարին, թերեւս վերստին հրապուրել զնա։ Իւր նաւատորմով կ'երթայ կը ներկայանայ հոն ուր Անտոնիոս նեղը մնացած էր։ Գողտագողի կը մտնէ կը սպրդի մէկ անկիւնն այն ներքնասենեակին ուր Ոկտաւիա կը բարեխօսէր սիրելիոյ հմայիչ խօսքերով, հաշտեցնելու համար իւր այրն իւր եղբօր հետ։ Ոկտաւիա հաշտարար պայմաններ առաջարկելու կ'երթայ ջուրին անդիի կողմն՝ իւր եղբօր մօտ,

---

—63—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՌ

ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆԿՈՒՄԸ

—Օ՛հ, օ՛հ, ըրաւ դերակոմսը, այդ հառաչանքնիդ շատ բան կ'իմացունէ ինծի։ Ատրիէն, արդեօք ձեր վստահութեան արժանի չե՞մ գտներ զիս։

—Ի՞նչ կ'ըսէք. բայց...

—Չե՞ք ուզեր ձեր տրտմութեան պատճառը յայտնել ինծի։

—Բարեկամս, ուրիշ բանի վրայ խօսինք։

—Լա՛ւ։ Ի՞նչ բանի վրայ կ'ուզէք որ խօսինք։

—Ինչո՞ւ համար Բարիզ երթալու տեղ, ինչպէս որոշած էիք, Սիրքուր դարձաք։

—Ձեզմէ նուազ գաղտնապահ ըլլալով, սիրելիս, պատասխանեմ ձեր հարցման. բայց նախ ազդարարեմ ձեզ թէ պիտի հարկադրուինք ակամայ այն նիւթին դառնալ, ուսկից խօսակցութիւնն հեռացնել տալու փափագ ունիք։ Եթէ շոգեկառք նստելու պահուս միտքս փոխեցի ու Սիրքուր դարձայ, ձեր պատճառաւ էր։

—Իրա՞ւ։

—Խօսքիս չի հաւատալն իմ բարեկամութեանս վրայ տարակուսիլ է։ Դուք ինքնին փնտռեցէ՛ք. Ուրիշ ի՞նչ շարժառիթ կրնաք գտնել։ Ո՛չ մէկ հատ, այնպէս չէ՞։

—Ճշմարիտ է։

—Ես դժուարաւ բաժնուած էի ձեզմէ. մնաց որ լուրջ պատճառ մը չունէի Բարիզ երթալու. առանց ձեզի ճանբայ ելլելու քաջութիւն չունեցայ։ Կը կրկնեմ ձեզ, Ատրիէն, միմիայն իմ բարեկամութիւնս է զիս Սիրքուր բերողը։

Մարգիզը ձեռքը դերակոմսին ձեռաց մէջ դրաւ զոր իրեն կարկառած էր։

Վայրկեան մը լուռ մնալէ յետոյ, յարեց.

—Պէտք չունիմ ըսելու թէ զձեզ դղեակ չի գտնելուս նեղացայ։ Կը կարծէի թէ իրիկունը պիտի վերադառնայիք ընթրեաց ժամուն, եւ առաջուց կը վայելէի ձեզ պատրաստած անակնկալիս հաճոյքը։ Գիշերը վրայ հասաւ. Ատրիէն չեկաւ։ Ձեզմէ ծածկելու պէտք չունիմ թէ սաստիկ մտահոգութեան մէջ էի, վասն զի Կասթօն որ անշուշտ գիտէր թէ ինչո՞ւ չէիք եկած, զգուշացաւ ինծի բան մը ըսելէ։ Մէկ խօսքով, շատ գէշ գիշեր մը անցուցի։ Կը դողայի որ չըլլայ թէ այն սոսկալի արկածներէ մին պատահէր ձեզ, որք դժբաղդաբար յաճախակի կը լսուին որսորդութեան եղանակին մէջ։

«Յաջորդ օրը, Կասթօն նամակ մը ստացաւ ձեզմէ. այն ատեն սիրտս հանգստացաւ, ինչպէս նաեւ Պ. տը Լիմանսիինն ալ որ մասնակից եղած էր իմ մտատանջութեանս։ Բնականաբար կը մտածէի թէ ի՛նչ կարեւոր գործ կրնար զձեզ Սիրքուրէն հեռու պահել։ Կասթօնը հարցափորձեցի, բայց իմ բոլոր հարցմանցս խուսափողական պատասխան տուաւ։ Յանկարծ, յիշեցի այն քաղցրիկ ու թարմ ձայնը, այն երգն, այն հեծեծանքները զորս լսեցինք Քօրթըլիէյի պարտիզին մէջէն։ Միտքս եկաւ այդ վայրկեանին ձեր ունեցած յուզումն եւ երգչուհին տեսնելու համար պատն ի վեր մագլցելու գաղափարնիդ։ Գործն հասկցայ։— Բարեկամս՝ Վէրվիյի մարգիզն, ըսի ինքնիրենս, սիրային արկած մը փնտռելու ետեւէ է։— Կը ճանչնամ զձեզ, սիրելիդ իմ Ատրիէն, գիտեմ որ շատ տաք երեւակայութեան տէր էք, թէ ո՛ր եւ է դէպք հզօր ներգործութիւն կ'ունենայ ձեր վրայ եւ թէ ինչ որ խորհրդաւոր երեւոյթ մը ունի, կը հրապուրէ զձեզ։

«Վերջապէս, տեսնելով որ Սիրքուր չէք դառնար, զձեզ փնտռելու յղնեց, երկու մէկէն ի մէկ որոշեցի ձեր քով գալ։ Զձեզ չգտնելով ի Լուկինեոն, ուր անցուցի գիշերը, Շամբլինեօյ եկայ, այն հաստատ համոզմամբ թէ կեդրոննիդ հոն հաստատած էք։

«Ուրեմն, սիրելիդ իմ Ատրիէն, ձեզ նկատմամբ ունեցած բարեկամութիւնս է որ մղեց զիս դղեակէն մեկնիլ երեկ, Շամբլինեօյ գալու՝ զձեզ գտնելու համար։

«Թերեւս մտածէք թէ, զձեզ հոս վար դնող պատճառը գուշակած ըլլալուս, հրաժարելու էի ձեր ետեւէն գալու խորհուրդէս։ Բայց յուսամ թէ չէք նեղանար այս բանիս համար, բարեկամութեան մէջ ամեն բան կը ներուի։ Կը վստահացնեմ զձեզ թէ միտքէս չանցաւ բնաւ թէ կրնայի տաղտկացնել զձեզ։ Եթէ իրաւ այդպէս ըլլար, շատ պիտի ցաւէի։ Ո՛չ, բարեկամս, ո՛չ, ես այստեղ եկած չեմ ձեր խորհուրդները տակնուվրայ ընելու համար։ Սիրքուրէն մեկնած ժամանակս բան մը միայն մտածեցի եւ ինքնիրենս ըսի՝—Ատրիէնը կրնայ այս միջոցիս բարեկամի մը խորհուրդներուն պէտք ունենալ։— Եւ հիմակ, սիրելիս, կը յարեմ. բոլորովին ձերն եմ, իմ բարեկամութիւնս ձեր տրամադրութեան ներքեւ կը դնեմ։

—Սիրելիդ իմ տը Սանղաք, պատասխանեց մարգիզը, թէպէտ դեռ զարմացած եմ մտածելով որ ինծի նկատմամբ ունեցած բարեկամութիւննիդ ինչե՞ր ընել տուած է ձեզ, այսու հանդերձ շնորհակալ եմ դարձեալ։ Ո՛չ, դուք ո՛չ խանգարող մըն էք, ո՛չ ալ ձանձրոյթ կը պատճառէք. մինչեւ իսկ ըսեմ թէ ուրախ եղայ զձեզ հոս տեսնելով։ Դուք ձեր բարեկամներուն անձնուէր էք եւ գիտեմ որ ի հարկին կրնամ վստահիլ ձեր վրայ։

—Ապահովապէ՛ս։

—Դուք մեծ փորձառութիւն ունիք, տը Սանղա՛ք, եւ ձեր խորհուրդներն արհամարհելի չեն. սակայն այսօր ձեզմէ խորհուրդ հարցունելու պէտք մը չունիմ։

—Լա՛ւ։ Բայց սա տխրութիւնը, զոր ձեր բոլոր ջանքերուն հակառակ չէք կրնար վանել, նշան մըն է թէ ձեր ներսիդին բան մը կայ որ կը չարչարէ զձեզ, թէ տխուր մտածութիւններ պաշարած են ձեր միտքը։

—Չեմ ուրանար։

—Ես այնպէս հաւատացած եմ միշտ որ մարդս կ'սփոփուի իւր նեղութիւնը բարեկամի մը հաղորդելով։ Ինչո՞ւ այդքան զգուշ ընթացք մը կը բռնէք։ Կը վախնաք որ չե՞մ կրնար հասկնալ ձեր ըսելիքն եւ կամ չա՞փ խիստ դատաւոր մը կը հանդիպիմ ձեր դէմ։

—Ո՛չ, ամեն ժամանակ գիտած եմ որ ներողամիտ աչքով կը նայիք ձեր բարեկամաց յիմարութիւններուն։

—Ե՛հ, սիրելիս, ես ալ իմ յիմարութեան օրերս ունեցայ ու ձեզի պէս երիտասարդութեան կիրքեր։ Քիչ մը առաջ իմ փորձառութեանս խօսքը կ'ընէիք. այդ փորձառութիւնն ստացայ, որովհետեւ ապրեցայ։ Ինքզինքս համար ներողամիտ ըլլալէ յետոյ, պէտք է որ հիմակ ալ ուրիշներուն համար ըլլամ։ Ձեր տխրութեան պատճառն յայտնեցէ՛ք ինծի։ Ո՞վ գիտէ. թերեւս յաջողիմ ձեր հակոտին խորհուրդներն անցունել, ու զուարթ ժպիտ մը բերել ձեր շրթանցը վրայ։

—Սիրելիս, իմ գլխուս եկածը այնքա՛ն տարօրինակ բան մըն է որ..

—Այն ժամանակ աւելի եւս պէտք կայ անոր վրայ խօսելու։ Արդէն, միթէ բան մը չի գուշակեցի՞։ Չեմ կրնար ենթադրել թէ այս պանդոկին մէջ եկած հաստատուած էք մի միայն առաւօտ իրիկուն Քօրթըլիէյի պատերուն շրջանն ընելու գոհունակութիւնը վայելելու համար։ Ատկից աւելին պէտք էր ձեզ։ Այդ խորհրդաւոր բնակարանին դուռը բացուած է ձեր առջեւ, եւ որովհետեւ վայելչագեղ, ազնուական ու բարեձեւ երիտասարդ մըն էք, սիրալիր ընդունելութիւն մը ըրած են ձեզ, ինչպէս որ պարտաւոր էին ընել։ Հետաքրքրութիւննիդ յագեցուցիք, որովհետեւ երգչուհին տեսաք։ Մանկամարդ աղջիկ մըն էր, այնպէս չէ՞։

—Այո՛, մանկամարդ աղջիկ մը։

—Տասնը վեցէն տասնը եօթը տարեկան։

—Ինչո՞ւ գիտէք։

—Կը գուշակեմ։ Չեմ հարցուներ թէ սիրո՞ւն էր, վասն զի կը գուշակեմ նաեւ թէ հրաշալի գեղեցկութիւն մը ունի, թէ շնորհազարդ է, եւ ձայնին նման՝ ժպիտն ու նայուածքն ալ հմայիչ են։

—Այո՛, այդ ամենն ունի։

—Քանի որ ինծի չէք հարցուներ թէ ինչո՞ւ այսքան լաւ կը գուշակեմ, ըսեմ ձեզ։ Կը գուշակեմ թէ այդ ծաղկատի աղջիկը... անունը ի՞նչ է։

—Օռօռ։

—Կը գուշակեմ թէ օրիորդ Օռօռ չքնաղ է, սիրուն, վասն զի իմ Ատրիէնի բարեկամս գլուխ հանելու եւ Վէրվիյի մարգիզին ցարդ անառիկ սիրտը գրաւելու զօրութիւնն ունեցաւ։ Անտարակոյս եմ որ մագնիսական հոսանք մը պատած է ձեր սիրտը, սիրահարուած էք, ձեր նայուածքը սիրոյ զեղումներով լեցուն է, Քօրթըլիէյի աղջիկը կը սիրէք։

—Չեմ ուզեր ծածկել ձեզմէ, այո՛, բարեկամս, կը սիրեմ զայն։

(Շարունակելի)

և Կլէօպատրա դուրս կուգայ իր Թաքստոցէն։ Կը յանդիմանէ զԱնտոնիոս իր անհաւատարմութեան համար. բայց Անտոնիոս ալ չարախօսութիւններ լսած էր Կլէօպատրայի գծուծ անհաւատարմութեանց վրայ։ Թագուհին ցասմամբ կը հերքէ։ Կը հաշտուին նորէն։ Անտոնիոս կամուրջը խզել կուտայ, Ոկտավիոսի և Ոկտավիայի հետ գործ չունենալու համար այլ եւս։ Պատերազմը կը վերսկսի։ Կլէօպատրա Անտոնիոսի կողմէ նոր անհաւատարմութեան կասկածներ կ'ունենայ, կ'առնու իր նաւատորմը կը վերադառնայ Աղեքսանդրիա։ Ակտիոնի ճակատամարտն Ոկտավիոսի յաղթութեամբ կը վերջանայ, և պարտեալ Անտոնիոս, Աղեքսանդրիա դիմելով, կը յանդիմանէ զԹագուհին իր դաւաճանութեան համար։ Ոկտավիոս կը պաշարէ զԱղեքսանդրիա։ Անտոնիոս ինքնասպան կը լինի. բայց որովհետեւ առաջին հարուածով չի մեռնիր, ինքզինք եգիպտացի Թագուհւոյն քով փոխադրել կուտայ, և նորա գրկաց մէջ հոգին կ'աւանդէ։ Կլէօպատրա եւս ինքնասպան կը լինի՝ իր ծոցին մէջ առնլով կանաչ փոքրիկ իժ մը, որոյ Թոյնը Թմրութիւն մը, քուն մը և մահ կը բերէ անզգալապէս, «առանց մարդուս դէմքը տգեղցնելու». զի մահուան մէջ իսկ կ'ուզէ գեղեցիկ մնալ Կլէօպատրա, որպէս զի իր անշունչ մարմինը դիտողներ վկայեն թէ արդարեւ կ'արժէ՛ր որ Մարկոս Անտոնիոս Թողուր իր Տէրութիւն և սիրէր զԿլէօպատրա։

Այս հակիրճ նկարագիր իսկ կը ցուցնէ թէ ո՛րչափ սրտաշարժ վիճակներ, [illegible] կացութիւններ կ'ընծայէ այս կախարդ կնոջ պատմութիւնը։ Պ. Վիքթորիէն Սարտու արուեստին բովանդակ ճարտարութեամբ օգտուած էր խաղին նիւթէն։ Սարա Պէռնարտ զմայլելի եղաւ իրարու յաջորդող բուռն և ներհակ կրից արտայայտութեան մէջ։ Մեքենական —բայց յոյժ ճշմարտանման— իժէ մը խայթուելէն ետքը տակաւ առ տակաւ մեռնիլն եւս մեծագոյն ճարտարութիւնն եղաւ այս դերասանուհւոյն, որ քաջ գիտէ Թատերաբեմին վրայ մեռնիլ։ Բնաւ ծախք չէր խնայուած ճշմարտապէս արեւելեան ճոխութեամբ եւ շքեղութեամբ ի հանդէս բերելու համար այս վաւերական և հետաքրքրաշարժ պատմութեան զանազան արկածները։ Պ. Ֆ. Կարնիէ կը ներկայացնէր զՄարկոս Անտոնիոս, Օր. Լօռ Ֆլէօռ՝ զՈկտավիա։ Իբրեւ գրական գործ եւս շատ կը գովուի նոր Թատերգութեան ոճը։ Բայց Պ. Ֆրանսիսք Սարսէյ նախամեծար կը համարի Շէքսփիրի ծանօթ Թատերախաղն՝ Անտոնիոս և Կլէօպատրա։

ԱԶԳԱՅԻ՛Ն ԼՈՒՐԵՐ

Մեր երկուշաբթի աւուր Թուով ընդարձակօրէն հրատարակեցինք իմաստն այն պաշտօնագրոյն որ առանձնաշնորհմանց խնդրոյն նկատմամբ Բ. Դրան կողմէ ղրկուած էր ի Պատրիարքարան։ Այս աւուր Թուրք լրագրաց մէջ հրատարակուած է այդ պաշտօնագրոյ բնագիրն, որոյ Թարգմանութիւնը պիտի հրատարակենք վաղուան Թուով։

Յառաջիկայ կիւրակէ, 21 հոկտեմբեր, Նարլը-Գաբուի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ, Թաղին քարոզիչ Արժ. Տ. Վաղինակ Ծ. վարդապետ Սիսակեան հանդերձեալ է Պատարագ մատուցանել յիշեալ եկեղեցւոյն մէջ։

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻ ՕՐԹԱԳԻՒՂԻ

Ցաւօք կը ծանուցանենք թէ Օրթագիւղի եկեղեցւոյն Աւագերէց Արժ. Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆԱՎԵԱՆ ի Տէր հանգեաւ այս առաւօտ ի խոր ծերութեան։

Օծման և Յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ կիրակի առաւօտ ի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Օրթագիւղի ուր պատարագ եւս պիտի մատուցուի։

Արժ. Տ. Իգնատիոս Հայրն աւելի քան քառասուն տարիէ հետէ կը քահանայագործէր Օրթագիւղի եկեղեցւոյն մէջ, և սիրելի ու պատկառելի հանդիսացած էր համայնից՝ իբր բարի և առաքինազարդ եկեղեցական մը։

ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ ԲԵՐԱՅԻ

Բերայի ազգային Արուեստանոցի Տեսչութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ազնիւ յաճախորդաց որ յառաջիկայ Նոյեմբեր 1էն սկսեալ Նորոյթի և շրջազգեստի (Modes et Confection) տնօրէնութիւնը պիտի վարէ Տիկին Ֆրիւժիէ, իւր հետ ունենալով սոյն արհեստի մէջ վարժ օժանդակներ։

Տիկին Ֆրիւժիէ որ քանի տարիէ ի վեր հաստատուած կը գտնուի Բերայի մէջ, շատերուն արդէն ծանօթ է իւր ճարտարութեամբ, իբր Փարիզցի առաջնակարգ դերձակուհիներէ մին։

Հետեւաբար ազնիւ յաճախորդք կրնան կատարելապէս ապահով լինել որ այս ճիւղի վերաբերեալ իրենց պատուէրներն եւս պիտի գործադրուին յետ այսորիկ՝ ճշդութեամբ և աւելի կատարելագործեալ պայմաններով։ 2—4

Հմուտ և փորձ դասատու մը կը փափագի թէ՛ ի Պոլիս և թէ ի գաւառս Ազգ. վարժարանաց մէջ դասախօսել տաճկերէն, աշխարհագրութիւն և պատմութիւն։ 182

Դիմել Արեւելքի խմբագրութեան։ 3—5

ԱԶԴ.—Երկու դեռահաս մանկանց համար վարժուհի մը կը խնդրուի որ գիտնայ լաւ հայերէն և ըստ բաւականին ֆրանսերէն։ Դիմել ի խմբագրատուն Արեւելքի։ 5—5

ՆԵՐՔԻ՛Ն ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Երուսաղեմայ կառավարիչ անուանեցաւ Իպրահիմ փաշա, կառավարիչ Սուրիական Տրիպոլսոյ։

Սիւլէյմանիյէի (Մուսուլ) կառավարիչ անուանեցաւ Ալի Րիզա էֆէնտի, նախորդ կառավարիչ Մալաթիոյ։

Հօտէյտայի կառավարիչ անուանեցաւ Իպրահիմ Բեամիլ էֆէնտի, նախկին կառավարիչ Թաազի (Եէմէն)։

Իւլայի առաջին աստիճան տրուեցաւ Երզնկայի կառավարիչ Ահմէտ Շէվգը էֆէնտիի։

Իւլայի երկրորդ աստիճան՝ Պոմպայի օսմանեան ընդհանուր հիւպատոս Գատրի պէյի։

Սալիսէի աստիճան՝ Սէրէզի նախնական միլքիյէ վարժարանին տնօրէն Խայրի էֆէնտիի։

Չորրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Պետրսպուրկի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար Նասրի էֆէնտիի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ Թէհրանի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար Սարգիս էֆէնտիի։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ վաճառական Յովսէփ Մուրատեան էֆէնտիի և եղբօրը Մկրտիչ Մուրատեան էֆէնտիի։

Հինգերորդ կարգի Մէճիտիյէ՝ Երզնկայի գաւառին երկրաչափ Միհրան էֆէնտիի։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսը, Բարձր. Սպարապետն և Դատական Վսեմ. Նախարարն երէկ յաջորդաբար կայս. պալատ գնացին և Վեհ. Սուլթանի հրամանները ստանալէ յետոյ իրենց պաշտօնատուները դարձան։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Արտաքին գործոց Վսեմ. Նախարարն երէկ երեկոյեան ժամ 10ին Մեծ-Եպարքոսին քով գնաց և ինչ ինչ կարեւոր խնդրոց վրայ խորհրդակցութիւն մը ունեցաւ Ն. Բարձրութեան հետ։

—Մաքսային վերատեսուչ Հասան Ֆէհմի փաշա և Ոստիկանութեան Նախարար Նազըմ պէյ երէկ Բ. Դուռը գնացին և յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

—Երուսաղեմայ Յունաց Պատրիարքին մայրաքաղաքիս փոխանորդն երէկ Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

ԵՐԿԱԹՈՒՂԻՔ Ի ԹՈՒՐՔԻԱ

Սամսոնէն ի Սեբաստիա երկաթուղւոյ մը շինութեան ծրագիրը զոր ներկայացուցած է Պ. Բոխմար, Զինուորական քննիչ յանձնաժողովոյն կողմէ քննուած ըլլալով, կայս. Իրատէ մը կը հրամայէ Հանրօգուտ շինութեանց նախարարութեան՝ նոր պայմանագիր մը պատրաստել, նկատողութեան առնլով այն բարեփոխումները զորս նախնական ծրագրոյն մէջ ներմուծած է Զինուորական քննիչ յանձնաժողովը։

—Սելանիկէն ի Մանասըր շինուելիք երկաթուղւոյ գիծը, որուն մենաշնորհն յանձնուած է Պ. Բատլայի, պիտի անցնի Քարաֆերիէէն, Ակօսթոսէն և Վօտինայէն։ Այս մենաշնորհի տեւողութիւնն է 90 տարի։ Կայս. կառավարութիւնը՝ շինուելիք ու շահագործուելիք իւրաքանչիւր քիլոմէտրի համար 14,300 ֆրանքի երաշխաւորութիւն տուած է արտօնատիրոջ։

Կ. ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆՔ

Նախարարաց խորհուրդը իւր չորեքշաբթի աւուր նիստին մէջ տեղեկագիր մը պատրաստած էր որով կը հաստատէր Պ. Կրանէի ներկայացուցած ծրագիրն ի մասին Կ. Պոլսոյ քարափանց շինութեան։ Այդ տեղեկագիր կայս. պալատ ղրկուած է Վեհ. Սուլթանին մատուցուելու համար։

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Մէքլէնպուրկի Դուքսը [illegible] Վէնտէ պատուանշանի առաջին աստիճանը նուիրած է արարողապետ Մինիր փաշայի։

Կրիֆոն պատուանշանի առաջին աստիճանը՝ կայս. Թիկնապահ Ֆէրիդ Ահմէտ Ալի փաշայի, Արտաքին գործոց Նախարարութեան արարողապետ Իպրահիմ պէյի և կայս. Թիկնապահ Հօպէ փաշայի։

[illegible] Վէնտէ պատուանշանի երկրորդ աստիճանը՝ կայս. պալատան առաջին տնօրէն Ահմէտ պէյի և Արտաքին գործոց նախարարութեան արարողապետի օգնական Ղալիպ պէյի։

Կրիֆոն պատուանշանի երկրորդ աստիճանը՝ Վեհ. Սուլթանի մառանապետ Օսման պէյի եւ նոյն պատուանշանի երրորդ աստիճանը՝ կայս. Թիկնապահ Հազարապետ Սառըք պէյի։

Կայս. Իրատէ մը արտօնած է այդ պատուանշանաց գործածութիւնը։

ՊԱՐՈՆ ՏԸ ՄՕՐՊԻՒՐԿՕ

Լոյտի ընկերութեան վարչական խորհրդոյ Նախագահ Պարոն տը Մօրպիւրկօ երեքշաբթի օրը Մեծ-Կղզի ու Հէյպէլի կղզին այցելեց Պ. Ֆօռնիի ընկերակցութեամբ և յաջորդ օրն ալ Պոլսոյ գլխաւոր վայրերն ու Մեծ-Շուկան պտտեցաւ։ Երէկ առաւօտ Պ. տը Մօրպիւրկօ իւր հրաժեշտի ողջոյնը մատոյց աւստրիական Վսեմ. դեսպանին և այցետոմս ղրկեց այն բազմաթիւ անձանց որոց փոխադարձ այցելութեան չէր կրցած երթալ, ինչպէս նաեւ տեղական ամեն ազգի գլխաւոր լրագրաց, որք իր գալուստն ու Կ. Պոլսոյ մէջ գտած ընդունելութիւնը հրատարակած էին։ Լոյտի Նախագահն երէկ երեկոյեան կառախումբով մեկնեցաւ ի Վիէննա։

ՅՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Եէնիտունեա Տիմիթրաքի էֆէնտի, հետն ունենալով մէկ քանի Յոյն երեւելիք, երէկ Բ. Դուռը գնաց և Պատրիարքարանի խնդրոց վրայ տեսակցութիւն մը ունեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Ֆրանսական դեսպան Մոնդէպէլլօ կոմս երէկ երեկոյեան Փարիզ ուղեւորեցաւ արեւելեան ճեպընթաց կառախումբով։

Կայարանին մէջ կը գտնուէին դեսպանք ոմանք և Արտաքին գործոց Նախարարութեան Թարգման Միքայէլ էֆէնտի, որք ողջերթ մաղթեցին Մոնդէպէլլօ կոմսին։

ՀԱՄԱԶԳԱՅԻ՛Ն ԱՆԿԵԼԱՆՈՑ

Վեհ. Սուլթանը բազմաթիւ Թանկագին կարասիներ շնորհած է հաստատուելի համազգային անկելանոցին։

ՄԱՌԷՇԱԼ ՄՈԼԹՔԷ

Վեհ. Սուլթանն, որ մասնաւոր հեռագրաւ մը շնորհաւորած էր մառէշալ Մոլթքէի ծննդեան 90րդ տարեդարձն, այս առթիւ հեռագիր մը եւս ուղղած է Գերմանիոյ կայսեր, բսելով որ մառէշալ Մոլթքէ ժամանակաւ օսմանեան տէրութեան ծառայութեանը մէջ գտնուած ատեն գովելի ծառայութիւններ մատուցած է։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբեր 17ին Հալէպի մէջ հընտախտէ վեց մահեր պատահած են, Այնթապի մէջ՝ 1, Անտիոքի մէջ՝ 30, Ուրֆայի մէջ՝ 1 եւ ի Համա՝ 42։

ԲԱԹԱՆԹԻ ՏՈՒՐՔԸ

Բաթանթի տուրք յանձնաժողովն երէկ ի նիստ գումարեցաւ ի Բ. Դուռն ընդ նախագահութեամբ Արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Վսեմ. Յարութիւն փաշայի եւ ի ներկայութեան դեսպանատանց առաջին Թարգմաններուն։ Երկար խորհրդակցութիւնք կատարուելէ յետոյ որոշուեցաւ յառաջիկայ երեքշաբթի օր եւս ի նիստ գումարիլ։ Կըսուի թէ այդ նստին մէջ վերջնական որոշում մը պիտի տրուի։

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿԻ ԴԱՏԸ

Պոլսոյ Ապահովութեան Սնտուկի նախորդ տնօրէն Սիւպաիզատէ Սիւլէյման էֆէնտիի և նոյն սնտուկի արկղակալ Փափազեան Յովհաննէս էֆէնտիի միջեւ եղած դատն երէկ տեսնուեցաւ Պոլսոյ Հուգուգի դատարանին առջեւ։ Յաւարտ դատավարութեան, սոյն խնդրոյն վերաբերեալ գրութիւնք ընդհանուր դատախազին ղրկուած ըլլալով, նախագահը յայտարարեց թէ այս պատճառաւ որոշումը տասն և հինգ օր յետոյ պիտի հաղորդուի։

ԿՈՎԿԱՍՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՔ

Բ. Դրան ստացած տեղեկութեանց համաձայն, Կովկասէն ի Թուրքիա գաղթողներու առաջին մասը վաղը Սեւ Ծովու եզերաց քաղաքները պիտի ելնէ։

Այս գաղթականք պիտի հաստատուին Բարբերդի, Ատանայի և Գաստամունիի նահանգաց մէջ։

Պ. ՆՕԷԼ ՊԱՐՏԱՔ

Պ. Նօէլ Պարտաք որ գործօն մասնակցութիւն մը ունեցած էր Բրիւքսէլի պարտատոմսից միացման առթիւ կատարուած բանակցութեանց մէջ, այս օրերս Կ. Պոլիս կ'սպասուի։ Պ. Պարտաքի այս ուղեւորութիւն կը վերաբերի պարտատոմսից նոր միացման մը ծրագրոյն։

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԸ

Յայտնի է թէ օտար երկիրներէ բերուած շերամի հունտերն մաքսատուրքէ ազատ կացուցուած էին որոշեալ պայմանաժամով մը։ Արդ, Մաքսային վերատեսչութիւնն այս աւուր Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ պաշտօնական յայտարարութեամբ մը կը ծանուցանէ թէ այդ պայմանաժամու աւարտման Թուականը մօտեցած է։ Սակայն պաշտօնական յայտարարութիւնը կ'ըսէ որ եթէ մաքսատուրքէ զերծ կացուցումը ջնջող որոշման հրատարակութենէն առաջ բերուած և կամ այդ որոշման հրատարակութենէն առաջ կնքուած և պաշտօնատեղւէ մը վաւերացեալ պայմանագրոյ մը համաձայն բերուած շերամի հունտերէն մաքսատուրք առնուի, այդ հունտերու տէրերը վնաս կը պատճառէ, այդ առթիւ հետեւեալ կարգադրութիւնն եղած է բարձրագոյն հրամանաւ։

Այդ որոշման հրատարակուելէն մինչեւ երկու ամիս պայմանաժամ պիտի տրուի և մէկ քանի տարիներու համար կնքեալ պայմանագրութեանց միայն այս տարուան նկատմամբ եղած տրամադրութիւնք նկատողութեան պիտի առնուին և այդ պայմանաժամէն յետոյ մաքսատուրք պիտի առնուի։

Հետեւաբար սոյն պաշտօնական յայտարարութեան Թուականէն սկսեալ երկու ամիս յետոյ մաքսատուրք պիտի առնուի որ եւ է պայմանագրութեան չենթարկուած շերամի հունտերէ։ Իսկ պայմանագրութեան ենթարկուածներէն միայն այս տարուան համար բացառութիւն մը պիտի ըլլայ և տարւոյն վերջն անոնցմէ ալ մաքսատուրք պիտի առնուի։

Կայս. հրամանաւ ի Սիրքէճի կառուցեալ երկաթուղւոյ նոր կայարանին բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, կէս օրին։

—Ի Պոլիս Ճաղալ Օղլու Թաղին մէջ կառուցեալ քաղաքային հանգստեան Թոշակի վարչութեան պաշտօնատան նոր շէնքին բացումն երէկ տեղի ունեցաւ ի ներկայութեան բարձրաստիճան պաշտօնէից։ Ոչխարներ զենուեցան և բարեմաղթութիւնք եղան վասն կենաց և բարօրութեան Վեհ. Սուլթանի։

—Երէկ Պոլսոյ Շէհր Էմինի Թաղը բնակող Մէհմէտ անուն վաթսունամեայ մարդ մը անձնասպանութիւն փորձեց դաշոյնով մը ինքզինքը վիրաւորելով։ Նոյնպէս Էտիրնէ Գաբուի կողմը 23 տարեկան Թահսին անուն երիտասարդ մը ինքզինքը վիրաւորեց դաշոյնով։

—Թուրքիոյ և Իտալիոյ միջեւ վերանորոգելի առեւտրական դաշնագրոյն համար կազմեալ յանձնաժողովն երէկ եւս ի նիստ գումարելով խորհրդակցութիւններ կատարեց։ Կ'ըսուի թէ յառաջիկայ նստին մէջ կարելի պիտի ըլլայ հարկ եղած դաշնագիրը պատրաստել։

—Երէկ տեղի ունեցաւ Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշայի որդւոյն կայս. Թիկնապահ Շէրիֆ պէյի ամուսնութիւնը Եգիպտացի բրէնս Հալիմ փաշայի աղջկան Էմինէ Հանըմի հետ։ Ներկայ էին դեսպանուհիք և օտարազգի երեւելեաց տիկնայք։

—Պրուսայի առեւտրական սենեկին նախագահ կարգուած է Բարսեղ Յովհաննէս էֆէնտի։ Նոյն քաղաքի արհեստական վարժարանին համար Յովհաննէս էֆէնտի նախապէս տասը հազար ղրուշ նուիրած ըլլալով, այս անգամ եւս 16,842 ղրուշ նուիրած է նոյն հաստատութեան։

—Նիկոմիդիայէն մինչեւ Էնկիւրի շինուելու վրայ եղող երկաթուղւոյ գծին վրայ Բազարճըք անուն տեղւոյն շրջակայքն աւազակաց խումբ մը երեւան ելած ըլլալով, տեղական կառավարութիւնը հարկ եղած պաշտօնեաները ղրկած է ձերբակալելու համար այդ աւազակները։

—[illegible] կ'իմանայ թէ Կարնոյ հանրային պարտուց վարչութեան պաշտօնեայ Մուսթաֆա էֆէնտի իւր ինչ ինչ ընթացից պատճառաւ դատաստանի ենթարկուած և երէկ դատն սկսած է տեսնուիլ Պետական Խորհրդոյ առջեւ։

—Կոմս Պելլըկառտ և Պառոն Լէտէբէր Ֆրաթէրն, որք սեպտ. 25ին (Ն. Տ.) Վիէննայէ ճամբայ ելած էին ձիով, երէկ մայրաքաղաքս ժամանեցին։ Այս երկու ձիաւորք կեցած են օր մը Հունգարիոյ Թէրէզիօբլ քաղաքն, երկու օր ի Պելկրատ, օր մը ի Նիշ, երկու օր ի Սօֆիա և օր մը յԱդրիանուպոլիս։ Այդ ձիերու մին 7 տարեկան է և միւսն՝ 9։ Օրը միջին հաշուով 40-70 քիլոմէդր ճամբայ կտրած են։

—Պոլսոյ մաքսատան մէջ սկսած են աճուրդի հանուիլ այն ապրանքներն որք մէկ տարի և երկու օրէ ի վեր Թողուած են հոն, առանց տէրերը երեւան ելնելու։

—Սերպիական դեսպանն որ ընտանեօք Մեծ կղզի կը գտնուէր, Բերայի դեսպանատունը դարձաւ։

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Օսմ. կայս. պանքայի Ղալաթիոյ և Պոլսոյ գրասենեակները գոց պիտի մնան վաղը, շաբաթ, 20 հոկտեմբեր։

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ձեր ազգօգուտ Թերթի երէկուան Թուոյն մէջ կարդացինք Բուլվէյէն առնուած ընդարձակ հատուած մը, յորմէ տեղեկացանք թէ հայերէն լեզուն ի բաց Թողուած է այդ դպրոցէն։

Այս պարագան Թերեւս ցաւ պատճառէ ոմանց, սակայն՝ ի գիտութիւն պատուարժան ընթերցողաց՝ կը փութամ հաղորդել թէ ՓԱՐԻԶՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ ՃԵՄԱՐԱՆԻՆ մէջ — ո՛չ թէ [illegible] դպրոցի՛ մը մէջ— մեր հայերէն գրաբար լեզուն բազում եռանդեամբ կ'ուսուցանէ մեծահռչակն Կարրիէր (A. Garrière), որուն դասախօսութեանց կը հետեւին, ի մէջ այլոց, չորս ռուսահայք եւս, որոց մին Տփղիսեցի օրիորդ մըն է։

Պ. Կարրիէր Ագաթանգեղոս և Եզնիկ վերծանել կուտայ իւր աշակերտաց, և միեւնոյն ժամանակ՝ մեր հարուստ մատենագրութեան վրայ ընդարձակ ծանօթութիւններ կուտայ։

Ի դէպ է յիշել աստանօր թէ մեր Փարիզաբնակ ազգային ուսանողք, չեն օգտուիր այն պարագայէն, զոր ֆրանսական կառավարութիւնն՝ ի յարգանս մեր լեզուին և ազգութեան՝ դիւրացուցած է օտար երկրի մը մէջ։

Կ. Յ. Պ.

Կը ծանուցուի արգոյ տպագրչաց թէ ՏԱՄԱՏԵԱՆ ՁՈՒԼԱՐԱՆԸ փոխադրուած է Պոլիս, Էսկի—Զապթիէ ճատտէսի, Թիւ 9։ 2—5

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՅ

Ընտիր Գրուածոց
Ազգային եւ Օտար Մատենագրաց
(Արձակ և Ոտանաւոր)

Սոյն ընտիր գործն ցարդ հրատարակուած հաւաքածոյներու մէջ առաջին տեղը կը բռնէ, ունի ճոխ պարունակութիւն մի ընտիր դասակարգութեամբ՝ շահագրգիռ և հետաքրքրական ուսումնոց համար։ Երկասիրողն՝ եւրոպայի մեծ հեղինակաց հետեւողութեամբ յաջողած է լաւագոյն միջոցով մի առաջնորդել զաշակերտս յուսումն աշխարհիկ լեզուի։

ՀԱՒԱՔԱԾՈՅՆ կը բաղկանայ երկու մասերէ։ Ա. մասին մէջ կը բովանդակին գեղեցիկ հատուածներ, պատմական և նկարագրական գրուածներ, առակներ, ևլն. Գինն է 3 դահեկան։ Իսկ Բ. մասին մէջ՝ որ առաջնոյն կրկինն է ու մեծադիր, կը պարունակէ մեծ մասամբ անտիպ գրուածներ, դրագիտական գլխաւոր կանոններ, 35 հայ հեղինակաց հակիրճ կենսագրութիւններն, առածներ, բարոյական խրատներ, բառագիտական ծանօթութիւններ ևլն ևլն։ Գինն 7 ուկէս դահեկան։ Կը ծախուին ամեն հայ գրավաճառաց քով։

Սոյն գործոյն կեղծ օրինակներէն զգուշանալու համար բաւ է միայն կարդալ գրքին ճակատն ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ. 163

Ֆրանսերէնի եւ Գերմաներէնի հմուտ պատուաւոր երիտասարդ մը կը փափաքի դիւրակեցիկ ընտանիքի մը մէջ դեռահաս մանկանց դաստիարակի պաշտօն ստանձնել։ Դիմել Արեւելքի Խմբագրատունը։

ՏՈՔԹՈՐ ՍԵՂԲՈՍԵԱՆ, տեղափոխութիւն բրած ըլլալով, կը ծանուցանէ իւր հիւանդաց թէ՝ այսուհետեւ կրնան զինքը գտնել Բերա, Եէնի չարշի փողոց, Թիւ 58, ամէն օր կէս օրէն վերջը, ի բաց առեալ երեքշաբթի օրերը։ 6—30

ՀՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Տպարան եւ Գրատուն

[illegible]

Ն. Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Զագմագճըլար Եօգուշու
Եալըրեան խան, Թիւ 8, 9, 10, 11

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ բարեյիշատակ Հօրս՝ Ճանիկ Արամեանի հաստատած Տպարանն՝ զոր ցարդ օտար ձեռքեր կը վարէին՝ այս անգամ ուղղակի մեր վարչութեան ներքեւ առած եմ։

Այս առթիւ պէտք եղած միջոցներն ի գործ դրած եմ լիովին գոհացնելու համար զամեն անոնք՝ որք բարեհաճին իրենց վստահութեամբ պատուել զմեզ։

Տպարանիս մէջ կը գտնուին Հայերէն, Տաճկերէն, Գաղղիերէն, Յունարէն, Պուլկարերէն եւայլ ամեն լեզուի տառեր՝ իրենց պարզ եւ զարդարուն տեսակօք։ Ինչպէս յառաջ ևս այսու եւս ամենամեծ խնամով պիտի տպագրուին ամենայն տեսակ գրուածներ, ինչպէս նաեւ հասարակական Հրաւիրագիրներ, Այցետոմսեր, Նամակագլուխներ, Մակագիրներ եւայլն, եւն։

Տպարանս իբրեւ նշանաբան ընտրած է Գնոյ չափաւորութիւն, պարկեշտութիւն, փութաջանութիւն եւ այն ամեն հանգամանքներ որք յատուկ էին Ճանիկ Արամեան Տպագրատան։ Կը հրաւիրուին Պաս. Հեղինակք եւ Արգոյ Ազգայինք փորձով հաստատել մեր բառերս։

ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

ԾԱՆՕԹ.— Գաւառներէ եկած յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ եւ փութով կը կատարուին։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ԻՏԱԼԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

ՀՌՈՄ, 30.—(Ա. Հ. Գ.) Իտալական նաւատորմին վնասներուն համար բռնածները չափազանց կը թուին։ Սակայն, ձեռնհաս անձանց խօսքին նայելով, վնասք կը հաշուին 800էն 850.000 Ֆրանք։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 19 Հոկտ.

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Միայն Գ. Սէրի)		19 22
Առաւօտեան բացուելուն		19 24
Նոյն օրն	»	19 24
Թահվիլըմթը Օսմանիէ երէկ երեկոյ [Գ. Կ.]		79 8
» » ժամ 5ին	«	79 17
[illegible]		
[illegible]	Ա. Սէրի	40 3/4
»	Բ. »	22 5/8
»	Գ. »	19 24
ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ		
Օսմանեան պանքայ	Անգլ. Լ.	5 2
Րէժիի բաժնեթուղթ	Ֆրանք »	9 25
[illegible]	» »	6 36
[illegible]	» »	4 36
Թրամուէյ	» »	525
[illegible]	Ղր.	78
[illegible]	Գ. Կ.	145
ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄՆԵՐ		
Օսմանեան ոսկի	Ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87
Անգլիական ոսկի	»	109 35
Մարք (գերմանական ոսկի)	»	106 30
Իմփէրիալ	»	91 25
Ֆլորին	»	51 12
Րուպլէ Թղթադրամ	»	7 60
Մէճ. արծաթ (ամբողջ)	»	107 30
Վէյնոց	»	102 30
Հինգնոց	»	102 20
Մէթալլիք	»	100
Թօսթեքէ	»	— —

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 30 Հոկտեմբեր, ժամ 3 վայր 35 երեկոյ

Ֆրանսական Իանթթ 3 %	94 2 1/2
» 4 1/2 %	106 15
Օսմանեան Քօնսօլիտէ Սէրի Դ.	18 15
Օսմանեան երկաթուղի	78 50
» Րէժիի բաժնեթուղթ	305
Պանք Օթոման	616 25
Քրէտի Լիոնէ	778 75
Իտալական Իանթթ 5 %	93 72 1/2
[illegible] 5 %	465
Արտօնեալ Թուրք (1890)	407 50
Եգիպտական միացեալ	493 75
Պանք տը Բարի	860
Օսմ. մաքս. արժեթուղթ	454 87 1/2
Սուէզի ջրանցք	2380
Պորտուգալական արտաքին	75 5/8
Ռիօ Թինթօ	608 75
[illegible]	697 50
[illegible]	25 26 1/2
Լոնտոն, 30 Հոկտ. ժամ 6 վայր — երեկոյ	
Անգլ. Քօնսօլիտէ	94 5/8
Օսմ. » Սէրի Դ.	17 13/16
» » » Ա.	40 3/4
» » » Բ.	22 5/8
» » » Գ.	17 13/16
Փոխառութիւն 1877	100 1/4
Պանք Օթոման	14 7/16
Եգիպտական միացեալ (Իւնիֆիյէ)	97 5/8
» առանձ. (Փրիվիլէժիէ) Նոր	91 1/8
Ռիօ Թինթօ	24 1/16
Ռումանիոյ (փոխառ. [illegible])	102 3/4
Հելլենական 5 %	90
Մօնօբօլ »	72 3/4
Ռուսական 1889	97 1/2
[illegible]	25 26 1/2
[illegible], 30 Հոկտ. ժամ — վայր —	
[illegible]	37 90
[illegible] բաժնեթուղթք	133 75
[illegible] ի Լոնտոնի վրայ	115 10
Բերլին, 30 Հոկտ. ժամ — վայր —	
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 35
Ռուսաց Թղթադրամ	246 50
Օսմանեան երկաթուղի	79
Օսմանեան Քօնսօլիտէ Սէրի Դ.	18 10

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 30 Հոկտ. ժ. — վ. — երեկոյ

Ֆրանսական Իանթթ 3 %	94 2 1/2
Օսմանեան քօնսօլիտէ Դ.	18 17 1/2
Օսմանեան երկաթուղի	78 75
Օսմ. Րէժի	606 25
Արտօնեալ Թուրք	407 62 1/2
Օսմ. Մաքս. արժեթուղթ	454 87 1/2
Պանք Օթոման	616 87 1/2
Ռիօ Թինթօ	606 25

ՄՈՒԽԱՊԵՐԱԹ ՎԷ ԸՍԹԼԱՀԱԹԸ ԹԻՃԱՐԻՅԷ

Correspondance & Terminologie commerciales

Վերոյգրեալ վերնագրով և Տաճկերէն ու Գաղղիերէն լեզուով ու տառերով, Կայսերական առեւտրական Համիտիէի վարժարանի նախկին ուսուցիչ Գրիգոր էֆէնտի Զօպայի այս երկասիրութիւնն սպառելու վրայ է։ Ութածալ եւ հինգ հարիւր էջերէ բաղկացեալ սոյն գիրքը քսան հատուածի մէջ զանազան առեւտրական նամականիոյ՝ պայմանագրութեանց՝ պարտամուրհակներու՝ փոխանակագրոց և այլն օրինակներ ինչպէս նաեւ առեւտրական կարեւոր և ընտիր բառերուն, ասացուածոց բառարան մը կը պարունակէ։ Իր տեսակին մէջ մէկ հատիկ եղող վերոյիշեալ աշխատասիրութիւնն՝ որոյ Թուրքերէն Թարգմանութեան մէջ մեծ ճշդութիւն պահած է՝ ոչ միայն ուսանողաց սոյն երկու լեզուներն իրարու բաղդատելով լաւ և դիւրին կերպով սորվելու միջոց մ'է, այլ նաեւ գործածական նամակներու ընտրութեամբն վաճառականաց իրենց առեւտրական առնչութեանց մէջ մեծ դիւրութիւն կ'ընծայէ։ Այս կրկին տեսակէտով կարի օգտակար եղող սոյն գիրքը կը գտնուի գլխաւոր գրավաճառաց քով։

177 6—10

ԲԺԻՇԿՔ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

ԵՒ ՆՈՑԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԶԲԱՂՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Բժիշկն իբր բարեկամ ճանաչել

Անտարակոյս որ և է հիւանդութեան դարմանման յաջողութիւնը կախում ունի գլխաւորապէս ո՛չ միայն հիւանդին խառնուածքին (tempérament) այլ նաև անոր մանրամասնութեանց վրայ կատարեալ տեղեկութիւն ունենալէ, մանաւանդ հիւանդին բարոյականը, այն ներքին ձգտումը մասնաւոր ուշադրութեամբ ուսումնասիրել հարկ է. բայց ի՞նչպէս կրնանք ադոր վերահաս լինիլ.— Ըստ կարելւոյն բարեկամութեան նուիրական կապեր ունենալով մեր բժշկին հետ.— Ամենօրեայ փորձառութեամբ հաստատեալ ճշմարտութիւն մ'է, Լե՛ր բարեկամ բժշկի քո խօսքը. Օգտաշատ խրատ մ'է թէ՛ առողջ վիճակնուդ մէջ անգամ տեսէ՛ք բժիշկն և խորհրդակցեցէ՛ք ընդ նմա Ձեր անցելոյն վրայ — ի՞նչ հարկ — Որպէս զի Ձեր հիւանդութեան պահուն զՁեզ լաւ ուսումնասիրած լինի. Շատ դրագէտներ, արուեստագէտներ այս խրատին հետեւած և միշտ գոհ մնացած են. Կարեւորն՝ լաւ ընտրութիւն մը ընելն է. մեծ խոհեմութեամբ պէտք է ընտրել տան բժիշկն, մինչ ընդհանրապէս սորա հակառակը կը տեսնենք. Չէ կարելի ըմբռնել թէ ի՞նչ աստիճան անհոգութեամբ, թեթեւամտութեամբ կը վարուին այս մասին. Պարագաներն, դիպուածն, գովաբանական բառ մը, սուտ կամ իրաւ տարածուած համբաւ մը բաւական են ստէպ բժիշկն ընտրելու և տանն յատկացնելու. Մե՜ծ անխոհեմութիւն. Մրտածենք գոնէ թէ բժիշկն այն անձն է առ որ կը յանձնենք, կը վստահինք ի՛նչ որ թանկագին է մեզ աշխարհիս վրայ քան զամենայն ինչ, առողջութիւնը, մեր և մեր ընտանեաց այս գրաւականը. Թէ երբ հիւանդ լինինք՝ մեր բժշկին հմտութեան և կորովամտութեան տրամադրութեանցը ենթակայ ենք, վերջապէս մահու և կենաց մեր բարձրագոյն դատաւորն է նա. Ո՛րքան լուրջ, ողջամիտ, խելացի մարդիկ այս դժուար և միանգամայն փափուկ կէտին մէջ իւրեանց անհոգութեան զոհ եղած են. Դժուար և փափուկ է ըսինք այս կէտ, բայց թէ ի՞նչ միջոցներով կրնանք ճանչել այն բժիշկն՝ որոյ միտքը, բարքը, բնութիւնը, համակրանքն ու սովորութիւնքը մերիններուն հետ ամենէն առաւելագոյն վերաբերութիւն ունենան. ո՞վ կարող է բազկերակը զննելով մեր սրտին թէ՛ բարոյական եւ թէ՛ ֆիզիքական վիճակն իմանալ, մեր հոգւոյն խորը թափանցել, նորա շարժմանց, զգայնութեանց, յուզմանց եւ ամեն գաղտնի խորհրդոցը վերահասու լինիլ. Ո՞ւր գտնենք այդ բարի, զգայուն մարդն որոյ քաղցր խօսքեր մեր ցաւը կ'սփոփեն, ինքն իսկ մեր անհանգստութեանց, մեր ցաւոց և մեր ակնկալութեանց կը մասնակցի. Նկատեցէ՛ք թէ հիւանդութիւն մը բուժելու համար գիտութիւնը չը բաւեր երբեք. պէտք է նաեւ ունենալ նրբագնին ուշիմութիւն, փափուկ զգայնութիւն, ճշգրտապէս թափանցող կարողութիւն, ի մի բան՝ մարդկային սրտի գործնական եւ փիլիսոփայական ծանօթութիւնն. Այսպիսի անձ մը շատ հազուագիւտ է. վասն զի նա որ այս ամեն կարեւոր յատկութիւնքն ի միասին ունենայ՝ բժշկական կատարելութեան հասնելու համար, ստուգիւ պիտի լինի ա՛յն բժիշկն որուն համար Հիպոկրատ կ'ըսէ, «նման Աստուծոյ, ըստ չափու [illegible] Աստուածն»։

Մի բան միայն բժշկի մը ընտրութեան մէջ կը խաբէ զմարդ ստէպ այն է՝ նորա արտաքին երեւոյթն. մեր արուեստն ի գործ դնող դասակարգն ալ՝ միւս արուեստագիտաց դասակարգին նման՝ չար, յոռի, յոռեգոյն, միջակ և պատուական անձանց աներեւակայելի խառնուրդ մ'է. պարկեշտ և լուսամիտ բժիշկէ մը բարձր անձ չը կայ, որ լաւ համոզուած է թէ մարդուս յաւագոյն, ազնուագոյն և արժանաւորագոյն գործն է՝ տառապող անձին օգնութեան հասնիլ. ինչպէս նաև չը կայ այն բժիշկէն ստորին մարդ մը՝ որ իւր արուեստն անխղճօրէն, առանց սիրոյ և առանց անձնուիրութեան, ի գործ կը դնէ, այն բժիշկէն կ'ըսենք, որ աւելի կամ նուազ շահաւոր արուեստ մ'ունենալով ի ձեռին, անկէ օգուտ քաղել կը խորհի միայն. Ինչպէս մի բարի քահանայ յամենայն ժամու եւ ամենուրեք բարիք կը գործէ, նոյնպէս բժիշկն ամենուրեք յոյս և մխիթարութիւն կը սփռէ. շատ անգամ դեղագիրը կը յանձնէ և դեղին գինն ալ ինք կը վճարէ, ողորմութիւն կուտայ և միանգամայն կ'առողջացնէ. Մարդ որչափ աղքատաց մօտ լինի, այնչափ կը մօտենայ երկնից արքայութեան. Սէր ուսման, սէր իւր նմանեաց, այս է աւասիկ բժշկի մը դրոշմն, որում պարտի հաւատարիմ մնալ ընդ միշտ. Այս եռանդն ի բարութիւն բժշկին քով, ո՛րչափ ազնիւ, ո՛րչափ արգիւնաւէտ է որ ո՛չ մի արուեստ մերինէն աւելի առիթ կ'ունենայ բարիք գործելու. Թէպէտ ընկերական ունայնութեանց դասակարգութեան մէջ բժշկութիւնը միջակ տեղ մը կը բռնէ, սակայն իւր ազդեցութիւն շատ մեծ է, քանզի ցաւոց, սարսափի և մահուան զարհուրանաց միջոցաւ կը ներգործէ մարդուս վրայ. Գեղեցկին տիրապետութիւնն հաճոյից վրայ հիմնեալ է, ուստի և տեւողութիւնը շատ կարճ. իսկ բժշկին տիրապետութիւնը շատ աւելի տեւողական է, քանզի տառապանաց, հիւանդութեանց վրայ հաստատեալ է, և ցաւը մեր կենաց գրեթէ անբաժանելի ընկերն է.

Հաւատացէ՛ք անկասկած թէ այն անձն որ մարդկային սրտի խորը կը թափանցէ, ուսեալ, կորովամիտ, խոհեմ և իրաց ու մարդկան վրայ գործնական ծանօթութիւն ունեցող բժիշկ մ'է. —Ինչո՞ւ— վասն զի ամեն օր իւր աչաց առջեւ մարդկութեան սքօղեալ պատմութիւնը, առանձնական կենաց գաղտնիքը կը պարզուի. Ցաւն, այն մեծ մատնիչը, մարդս իւր իսկական վիճակին մէջ ի հանդէս կը բերէ. ո՛չ եւս սքօղում, կեղծիք, այլ բարուց այլազան արտայայտութեանց ստուգութիւն. Այդ բժիշկին նկատողութենէն չեն վրիպիր ո՛չ դիւցազնական համակրութիւն, որ միշտ գաղտնի մնալ կ'ուզէ, ո՛չ զարմանալի համբերատարութիւն և վսեմ փիլիսոփայութեան սքանչելիք ընդ հարուածոց դժբախտութեան, ո՛չ տիտանեան եւ յուսահատ ճգունք ընդդէմ ցաւոց, ո՛չ ֆիզիքական և բարոյական տանջանաց զարհուրելի զուգադրութիւն, ո՛չ ի մեր կրից ծագումն առած դժբախտութիւնք, ո՛չ մշտնջենական ցաւոք և հեծութեամբ լի կեանք եւ վերջապէս ո՛չ մին մեր կենաց ամենամեծ գաղտնիքներէն չէ կարող վրիպիլ այդ բժշկին տեսութենէն, որ խելամուտ է այս ամենուն, որ կարող է ճանչել զանոնք, հասկնալ զիւր նմանիս եւ համակրիլ նոցա. Ստոյգ է որ թագաւորաց, դիւցազանց և մեծ մարդոց բժիշկներն այն աստիճան կը ճանչեն զանոնք որ լաւատեղեակ պատմագէտք անգամ կարող չեն ճանչել այնչափ.

Աւասիկ յայտ կը կայանայ լաւ ընտրութեան կարեւորութիւնն ինչպէս և յայնմ յաջողելու դժուարութիւնն. Հրապուրելու արուեստ մը կայ, զոր բժիշկք ոմանք, անուսք սակայն, քաջ գիտեն, և յորմէ դժուարին է զգուշանալ. Երբ սնապարծ տգէտ մը գայ և իւր անձին վրայ պարծի, իւր յաջողուածքը գովէ, երբ հաստատել ուզէ թէ Ասկղեպիոսի ճմլած ոտքը, Ապողոնի կոտրած թեւը բուժած է, խելացի մարդ մը գիտէ թէ ի՛նչ աստիճան կարեւորութիւն ունենին այդ խօսքեր. Ի վերայ այսր ամենայնի դիւրին ալ չէ պերճ շատախօսութեան կամ իմաստակական շինծու ծանրաբարոյութեան երեւոյթին ներքեւ, ճարտար և կեղծ բարեկրթութեան սիրուն և վայելուչ ձեւին տակ նշմարել տխմարութիւնն, մեծամտութիւնն, ստորնութիւնն, արհամարհոտ անձնասիրութիւնն և ոսկւոյ անյագութիւնն.

Այն մարդն որ թշնամանաց կը հանդուրժէ, որ կարող է ցածնալ, զիջանիլ, ստորնանալ, նուաստանալ, այն՝ որ իւր դէմքը, իւր խօսքը, իւր շարժուածքը ժամանակին, պարագային և անձանց պահանջման կը յարմարցնէ ըստ կամս, այնպիսին միայն ամբոխը կը յաղթահարէ, այնպիսին մարդկան որսորդ մ'է, որ կարող է ձգել դիւրաւ իւր ցանցին մէջ տխմար, դիւրահաւան մարդիկն, ամբոխին մեծագոյն մասն և աւելին քան զայս՝ երբեմն նոյն իսկ ո՛չ սակաւ խելացի մարդիկ. Ուրեմն համբաւն եւ ժողովրդեան տարածած զրոյցներն չեն կարող բժշկի ընտրութեան մէջ օգնել մեզ. քանզի [illegible] յորմէ խորշելու է քաղաքակրթութեան արդի վիճակին մէջ. Ընդհանրապէս մեծ համբաւն՝ մանաւանդ բժշկականութեան մէջ՝ ո՛չ տաղանդի գոյութիւնը եւ ո՛չ ալ տարակայութիւնը կ'ապացուցանէ. Կան բժիշկք՝ որք իրօք ուսման եւ արուեստին գագաթնակէտն հասած են, կան նաեւ ուրիշներ՝ որք հանրային կարծիքը մոլորեցնելու ճարտարութիւնն ունին, որք կարող են իւրեանց համբաւոյն վրայ վստահութիւն հրաւիրել, և հանրութեան ներշնչել լռելեայն՝ զոր ինչ կ'ուզեն որ բարձրաձայն քարոզուի իւրեանց համար. Այս վերջնոց մեքենայութիւնքն ո՛րչափ յաջողեալ, եւ առաջնոց արժանիքն ո՛րքան ի սակաւուց գնահատեալ, բախտն ո՛րչափ կոյր, ոսկեզօծն ո՛րչափ նման զուտ ոսկեղինին, որ շատ կարելի է սխալել. Պարզամիտ մարդիկ հանապազօր շաղակրատաց թակարդներուն մէջ կը բռնուին, այլ միթէ արուեստագէտն, դրագէտն, ուսեալն՝ որ ընդհանրապէս պարզ բարուց տէր, իւր գործէն դուրս ամեն բանի օտար, այս աշխարհիս յորձանքէն հեռի իւր գրեանց և նկարուց մէջ կ'ապրի, կրնա՞յ զերծ մնալ այս սխալման վտանգէն. Ուրեմն ի՞նչ ընել պէտք է.—Եթէ դիպուածն, առիթն, Ձեր բախտաւոր ճակատագիրն տայ ձեզ ո՛չ միայն մի ճարտար բժիշկ այլ նաեւ կարեկից, ժրաջան մի բարեկամ որ առ ինքն վստահողներուն տառապանաց կը կարեկցի, որ լաւատեղեակ է մարդկային բնութեան և սորա յարակից անկանոնութեանց, այսինքն ա՛յն զգայուն, փոթորկալից, ծայրայեղ բնութեան, որ սեպհական է այն անձանց, զորս հանճարն, տաղանդն, համբաւն կը զրկեն մտքի հանդարտութենէ և ընկերական հաճոյքէ, հաւատացէ՛ք յայնժամ թէ անգին գանձ մ'է զոր գտած էք և յանձնեցէ՛ք անպայման կերպիւ ձեր առողջութիւնն այդ մահկանացու բարերարին. ո՛չ ոք յայսմ աշխարհի կարող է լաւագոյնս հանդարտեցնել Ձեր հոգեկան եւ մարմնական անձկութիւնքն, քանզի ո՛չ այլ ոք անոնց բուն աղբիւրը կրնայ ճանչել. այդ բժիշկը Ձեր կենաց դառնութիւնքն պիտի մեղմացնէ, Ձեր վիշտերն բարեկամութեան ապաստանով պիտի ամոքէ. Ձեզ սպառող երեւակայութեան հուրը պիտի չափաւորէ, առանց զայն շիջուցանելու, որով Ձեր հանճարն արգասաւոր պիտի լինի և ցաւը չպիտի կարողանայ երբեք թունաւորել զայն արգասիք, ի շնորհս տաղանդի ձեր բարեկամ բժշկին և նորա անձնուիրութեան.

ՏՈՔ. ՌԻՎԼԷՑԷԼ-ԲԱՐԻԶ

Անդամ բժշկական Ակադեմիոյ Բարիզու

Թարգմ. ՏՈՔԹ. Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՍՏԵՂԾՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԻ

ԸՍՏ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԱՑ

(Աստուածաշունչ գիրք, Եգիպտացիք, Քաղդէացիք, Հնդիկք եւ Զէնտ-Աւեստա)

Արեւելեան հին ազգք աշխարհիս ստեղծումն այլազան և առասպելախառն կերպիւ աւանդած են մեզ. Փափաքելի էր մեզ գիտնալ՝ թէ մեր դիւցազնաշունչ նախնիք և մեր մամիկներն արդեօք հայադրոշմ աւանդութիւն մը ունի՞ն աշխարհիս ստեղծման վրայ.

Ա. Աստուածաշունչ Գիրք. —«Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր. Եւ երկիր էր աներեւոյթ և անպատրաստ. եւ խաւար ի վերայ անդնդոց. եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց. Ու ասաց Աստուած, եղիցի լոյս, եւ եղեւ լոյս. Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է. և մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին. Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ, և զխաւարն՝ գիշեր. Եւ եղեւ երեկոյ՝ եւ եղեւ վաղորդայն՝ օր մի. Եւ ասաց Աստուած. եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ, եւ եղեւ այնպէս. Եւ արար Աստուած զհաստատութիւնն և անջրպետեաց ի մէջ ջրոյն՝ որ ի ներքոյ հաստատութեան, եւ ի մէջ ջրոյն որ ի վերայ հաստատութեան. Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւնն երկին. եւ ետես Աստուած զի բարի է, եւ եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն՝ օր երկրորդ. Եւ ասաց Աստուած, ժողովեսցին ջուրքդ որ ի ներքոյ երկնից ի ժողով մի, եւ երեւեսցի ցամաքն. Եւ եղեւ այնպէս. եւ ժողովեցան ջուրքն, որ ի ներքոյ երկնից՝ ի ժողովս իւրեանց, եւ երեւեցաւ ցամաքն. Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր. եւ զժողովս ջուրցն կոչեաց ծովս, և ետես Աստուած զի բարի է. Եւ ասաց Աստուած, բղխեսցէ երկիր բանջար խոտոյ, սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, և ծառ պտղաբեր առնել պտուղ ըստ ազգի իւրում, որոյ սերմն իւր ի նմին ըստ ազգի ի նմանութիւն, ի վերայ երկրի, և եղեւ այնպէս. Եւ եհան երկիր բանջար խոտոյ, սերմանել սերմն որ է ի վերայ ամենայն երկրի. և փայտ պտղաբեր առնել պտուղ որոյ սերմն իւր ի նմին ըստ ազգի ի վերայ երկրի. և ետես Աստուած զի բարի է, եւ եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն, օր երրորդ. Եւ ասաց Աստուած՝ եղիցին լուսաւորք ի հաստատութեան երկնից, ի լուսաւորութիւն ի վերայ երկրի. եւ մեկնել ի մէջ տուընջեան եւ ի մէջ գիշերի, եւ եղիցին ի նշանս, և ի ժամանակս, եւ յաւուրս եւ ի տարիս, եւ եղիցին ի լուսաւորութիւն ի հաստատութեան երկնից ծագել յերկիր եւ եղեւ այնպէս. Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն զմեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուընջեան, և զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերի և զաստեղս, և եդ զնոսա Աստուած ի հաստատութեան երկնից լուսատու լինել յերկիր եւ իշխել տուընջեան եւ գիշերի, եւ մեկնել ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին. և ետես Աստուած զի բարի է, և եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն, օր չորրորդ. Եւ ասաց Աստուած, հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց, և թռչունս թեւաւորս ի վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից. և եղեւ այնպէս. Եւ արար Աստուած կէտս մեծամեծս և զամենայն շունչս զեռնոց կենդանեաց, զոր հանին ջուրք ըստ ազգի իւրեանց, և զամենայն թռչունս թեւաւորս ըստ ազգի. Եւ ետես Աստուած զի բարի են. Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասէ. Աճեցէք և բազմացարուք, և լցէք զջուրս որ ի ծովս, և թռչունքդ բազմասցին ի վերայ երկրի. Եւ եղեւ երեկոյ, և եղեւ վաղորդայն օր հինգերորդ. Եւ ասաց Աստուած, հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի, և սողունս, եւ գազանս երկրի ըստ ազգի. և եղեւ այնպէս. Եւ արար Աստուած զգազանս երկրի ըստ ազգի, և զամենայն սողունս երկրի ըստ ազգի իւրեանց, և ետես Աստուած զի բարի են. Եւ ասաց Աստուած, արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցեն ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և անասնոց, և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողին ի վերայ երկրի.

Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի իւրոյ արար զնա, արու և էգ արար զնոսա. Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասէ, աճեցէք և բազմացարուք՝ և լցէք զերկիր, և տիրեցէք դմա. և իշխեցէք ձկանց ծովու, եւ թռչնոց երկնից. և ամենայն անասնոց, և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողին ի վերայ երկրի. Եւ ասաց Աստուած, ահաւադիկ ետու ձեզ զամենայն խոտ սերմանելի՝ սերմանել սերմն ըստ ազգի եւ ըստ նմանութեան, որ է ի վերայ ամենայն երկրի, և ամենայն փայտ որ ունիցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ, ձեզ լիցի ի կերակուր, և ամենայն գազանաց երկրի, և ամենայն թռչնոց երկնից, եւ ամենայն սողնոց որ սողին ի վերայ երկրի՝ որ ունիցի շունչ կենդանի, և ամենայն խոտ դալար ի կերակուր. և եղեւ այնպէս. Եւ ետես Աստուած զամենայն զոր արար, և ահա բարի են յոյժ. և եղեւ երեկոյ, և եղեւ վաղորդայն, օր վեցերորդ. . . . Եւ օրհնեաց Աստուած զօրն եօթներորդ, և սրբեաց զնա. զի ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել Աստուած.

Բ. Ըստ Եգիպտացւոց.— «Ամոն-Հաա ըստեղծեց զնու, Նախատիպ ովկիանոսն, ուր կը ծփայր ամէն իրաց սերմն. Ամոն-Հաա՝ անսկիզբն և անվախճան, մարմնացեր ու ծներ էր այս հեղանիւթէն. Ամոն-Հաա է անփոփոխ և գիտէ զներկայն և զապագայն, ամէն ուրեք է, առանց ոչ ինչ պակսելու իւր էութենէն՝ ստեղծեց զաշխարհս. Ստեղծեց հողը, արծաթն, ոսկին, լազուարթն ի հաճոյս իւր, խոտ՝ անասնոց համար. տունկ ի սնունդ մարդկան, շունչ տուաւ ձկանց որ լողան գետոյն մէջ, թռչնոց՝ որ ճախրեն յերկինս, սնունդ տուաւ ծակը պահուըտող միջան, թռչնոց որ ճիւղերու վրայ ապաւինած են. Ամոն-Հայի աչքէն ծնան դիք եւ մարդիկ, որ սփռեցան երկրի վրայ. կը կոչուէին Ամոն-Հայի Ժողովուրդ, և բաժնըւած էն 4 դասու. ա. Ռոմէ (Եգիպտացիք), ընտիր դասն, բ. Նեհեսի (Խափշիկք). Հօր դից պաշտպանութեան ներքեւ. գ. Ամու՝ (Ասիացիք) սպիտակ մորթով, և դ. որ կը բնակին հիւսիսային կողմը, Սեխէթ դիցուհւոյն պաշտպանութեան ներքեւ».

Ուստի, եգիպտացիք կ'երգեն Ամոն-Հայի. «Ողջոյն քեզ, ո՛վ Ամոն-Հաա, գովեմք զքեզ, որ բնակիդ առ մեզ. Կ'երկրպագեմք զքեզ, որ ստեղծերդ զմեզ. օրհնիս յամենայն արարածոց և երկրպագիս ի բարձունս երկնից եւ ի խորս անդնդոց. դիք ի ծունր խոնարհել առաջի Սրբութեանդ.»

Գ. Ըստ Քաղդէացւոց.—Ապսու, Անդունդըն և Մումմու՝ Քաւոսն՝ միացան և ստեղծեցին երեւակայական արարածներ, թռչնոց մարմնով պատերազմիկներ, ագռաւի ձեւ մարդիկ, չորս բերանով և ձկան տըտունով շուն. Այս ճիւաղները ջնջուեցան և ստեղծուեցաւ աշխարհս եօթն աւուր մէջ, երկինք, երկիր, աստեղք, տունկք, անասունք և մարդիկ. Մարդը բնակեցաւ հեշտաւէտ դրախտին մէջ, Էդն, տես Աստուածաշնչի պատմածն.

Նախկին Քաղդէացիք զերկիրս կը համարէին որպէս նաւակ մի, որոյ միջուկն էր բնակարան խաւարի և մահու. նաւակին գմբեթարդ մակերեսին վրայ էր երկիրս՝ շրջապատուած Ապզուէն (ովկիանոս գետ). Մակերեսին կեդրոնը գրաւած էին Քաղդէացիք. Ցայնկոյս Ապզուի կը բարձրանայ Գուրուն Գալլա Մա (սուրբ լերինք) որ զերկինս կը միացնէ երկրի հետ. Աննա (երկինք) ընդարձակ կիսաբոլորակ գմբէթի ձեւ ունի. նորա ստորին մասն յենած է նաւակին ծայրը. Աննա կը դառնայ առանցքի մը վերայ Արեւելեան լերին շուրջն. աստեղք բեւեռեալ են երկնակամարին վերայ. Երկնից և երկրի միջեւ կը դառնան եօթն մոլորակք, ամպք, հողմունք, շանթք և անձրեւք. Երկիրն (Եա) հաստատուած է Անդնդին (Մուլլիլլա) վերայ և երկինք՝ երկրիս վերայ».

Դ. Ըստ Հնդկաց.—«Աշխարհս անպատրաստ և կատարեալ քայքայման մէջ էր (Բրալայա), երբ տէրն ինքնագոյ, Տիեզերական հոգին, կամեցաւ ի գոյ ածել երկիրս. Բնութիւնն (Բրաքրիթի) տակաւին չէր ստեղծուած, չէր մակաբերուած և ոչ յայտնուած երբ Տէրն յայտնեց իւր փառքն և աշխարհըս երեւեցաւ. Նախ ստեղծեց ջուրն, ուր դրաւ սերմն որ ծնաւ Ձու մի ոսկեփայլ. Այս ձուէն ծնաւ Բրահմա, (Հեղօք), այսինքն բղխումն, որ երեւեցաւ ի կերպարանս Բրահմայի (արական), Հիրանյա Կարպա (ծնունդ) անուանեալ. Բրահմա ի վերջանալ աստուածային մի տարւոյն (այսինքն 3,110,400,000,000 մարդկային տարի), իւր յատուկ կամօք և որոշմամբ բաժնեց ձուն երկու մաս Երկինք և Երկիր. Երկնից և երկրի միջեւ դրաւ օդն և 8 գլխաւոր կողմերն (հիւսիս, հիւսիսային արեւելք, արեւելք, հարաւային արեւելք, ևլն.). Բրահմա ստեղծեց զգայարանքներն, տարրերքներն, կենաց հանգամանքներն և ապա զայնս երկու մասի բաժնեց, մին արական և միւսն իգական. սոցա զուգաւորելէն ծնաւ Վիրաժ, Մեծն Մանու, առաջին մարդն. Մեծն Մանու կենաց դժուարութիւնները գործնականապէս տեսնելէն վերջ ստեղծեց տասն հռչակաւոր Բրաջապատիներ, (Մահարսի), որք են Մարիչի, Ադրի, Անգիրա, Բուլաստիա, Բուլահա, Գրադու, Տագշա կամ Բրաչէթա, Վասիշտա, Բհրիգու և Նարադա. Այս տասն իմաստունք ըստ կարգին ստեղծեցին 7 երկրորդական մանուներ, որք են Սվայամբհուվա, Սվարոչիշա, Աուտամի, Թամասա, Ռայվաթա, Չաքշուշա և Վայվասվատա, նաեւ անասուններն և համայն նիւթական աշխարհը. Միշտ պիտի տեւէ աշխարհիս ստեղծագործութիւնն և եղծումն. Աշխարհիս ստեղծագործութեան և եղծման միջեւ կայ Գալբա (Բրահմայի օր) մի, եղծման և վերստեղծման միջեւ (որովհետեւ ստեղծումն և եղծումն անհուն և անթիւ են) կայ Բրահմայի գիշեր մը. Մէն մի գալբա կը բաժնուի Մանվանթարաներու, այսինքն շրջան մը, որոյ իւրաքանչիւր մասին մէջ աշխարհս կը կառավարի Մանու մը. Մէն մի Մանվանթարա բաժնուած է 4 շրջաններու որ միմեանց կը յաջորդեն արշալոյսէ և վերջալոյսէ վերջ. Առաջին շրջանը կը կոչուի Գրիդայուգա (կատարեալ դարձ). որ 4,000 երկնային տարի է. մէկ երկնային տարին է 360 երկրային տարի. մէն մի արշալոյս և վերջալոյս կը տեւեն 400 տարի. Երկրորդ շրջանն է Թրէդայուգա (Ողջախիզաց դար), և է 1,296,000 տարի. Երրորդը՝ Տվաբարայուգա (Տարակուսի դար), է 864 հազար տարի. Չորրորդն է Գալիյուգա (Երկպառակութեան դար) է 432,000 տարի. Մէն մի արարած ունի իւր պաշտօնն, իւր բնակարանն, իւր ստորոգելիքն, ամէն ինչ ստեղծուած է շնչաւոր էակաց համար.

Մարդկան դասակարգութիւնք Բրահմայէն ծագած են. — Բրահմանք, այսինքն քուրմք եւ գիտունք՝ ծնած են գլխէն. Քշատրիյաք, այսինքն թագաւորք իշխանք և պատերազմիկք կուրծքէն, Վայշյաք, այսինքն ճարտարարուեստք, վաճառականք և հողագործք՝ որովայնէն, և Սուդրայք՝ այսինքն արհեստաւորք և սպասարկուք՝ ոտքերէն.»

Ե. Ըստ Զէնտ-Աւեստայի. — «Ահուրա-Մազդա (Որմազդ, Որմիզդ) ստեղծեց հետզհետէ զերկինս, զջուր, զերկիր, զծառ, զանասուն և զմարդիկ. Առաջին կենդանի էակն եղաւ Եզական Ցուլը, որ մեռաւ Անկրօ-Մայնուի (Արիմն) կրկնակի յարձակումներէն, նորա անդամներէն յառաջ եկան առողջարար տունկք. Նորա հոգին եղաւ անասնոց պաշտպան աստուածութիւն մը. Նորա սերմն հաւաքուելով լուսնէն՝ կազմուեցան արուն եւ էգ, յորոց ծնան 270 անասունք. Նմանապէս երկրորդ արարածը՝ Գայա-Մարէթան (առաջին մարդ) կրեց Անկրօ-Մայնուի (Չար հոգի) հարուածներն. Նորա բեկորներէն ծնաւ Կայոմարդ կամ Կայոմարզ. Բարի արարածոց մէջ առաջինն է շունն և ապա կուղբն. Ահուրա-Մազդայի մէն մի բարի արարչագործութեան դէմ՝ Անկրօ-Մայնու ստեղծեց չար արարած մը, գայլ, գորտ, օձ, մըջիւն, ճշմարիտ [illegible] պարտք դրուած է Չար հոգւոյ արարածներն սպանել.

Ահուրա-Մազդա և Անկրօ-Մայնու ծնան Զրուանէն (Ժամանակ). Ահուրա-Մազդա ստեղծեց բարի արարածներ, իսկ Անկրօ-Մայնու՝ չար արարածներ.

Ահուրա-Մազդա և Անկրօ-Մայնու ունին հոգեղէն լեգէոններ իբր ի ծառայութիւն. Ահուրա-Մազդայի լեգէոնք կը կոչուին Եազատա (հրեշտակք, Ֆէրէշթէ), իսկ Անկրօ-Մայնուին՝ դեւք. Հրեշտակք կը բնակին ի լուսեղէն գաւառս, յարեւելս, իսկ դեւք՝ ի խաւարչուտ տեղիս՝ յարեւմուտս. Երկու բանակք միշտ ի կռուի են, պատերազմին դաշտն է աշխարհս. Ահուրա-Մազդա և Եազաթայք կը ջանան զմարդ պաշտպանել և երջանիկ ընել, իսկ Անգրօ-Մայնու և իւր դեւք՝ չարաբաստիկ և չար».

ԴԱՒԻԹ Ց. ԽԱՉԿԵԱՆ

ԸՆԴ. ՄԱՍՆԻԿ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Բնական, Քաղաքական եւ Տնտեսական

Ի ՊԷՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԱՑ

ՅՕՐԻՆԵՑ

Գին ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ 6 Ղր.

ՈՒՍՈՒՑԻՉ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Տ ԱՊՐ. ԵՒ ՎԱՃԱՌ. Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ԹԻՒ 14

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔԵՐ

ՊԱՏՐԱՍՏԵԱԼ Ի Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԷ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Պոլսոյ և շրջակայից, յատակագիծ պատկերով Վոսփորի.— Աշխարհագրութեան ուսումն՝ ըստ նորագոյն մեթոդի՝ տեղագրութենէ սկսելու համար անհրաժեշտ դասագիրք մ'է ի պէտս Պոլսոյ վարժարանաց. կը ծառայէ նաեւ իբր ընթերցանութեան գիրք ժողովրդեան. գործի մարդոց համար ունի յաւելուած մ' Կ. Պոլսոյ խանութուն ընդհանուր ցուցակը 100 փր.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Նախապատրաստական դասագիրք. Բնական, Ուսումնական և Քաղաքական. Բ. տպագրութիւն հիմնովին բարեփոխեալ և ճոխացեալ՝ մանկավարժութեան նորագոյն պահանջմանց համաձայն. Մասնաւորապէս ընդարձակ կը խօսի Օսմ. Պետութեան, ինչպէս նաեւ դրացի երկիրներու՝ Կովկասի և Պարսկաստանի վրայ. 3 ղրշ.

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ Նախապատրաստական Դասագիրք. Մտաւոր և Գրաւոր. Դ. տպագրութիւն.— Մանկավարժական նոր և դիւրուսոյց եղանակաւ պատրաստուած և մանկական բազմաթիւ պարզ եւ ընտանի խնդիրներով ճոխացած. 3 ղրշ.

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ Նոր դասագիրք. Տեսական և գործնական. Մանկավարժական նոր և դիւրուսոյց եղանակաւ և պարզ ու դիւրըմբռնելի ապացուցութեամբ պատրաստուած. կը բաժնուի երեք մասերու.

ՄԱՍՆ Ա.—Չորս գործողութիւն ամբողջ թուոց, 650ի մօտ հրահանգներով և գործնական խնդիրներով. Բ. տպագրութիւն բարեփոխեալ և ճոխացեալ 4 ղրշ.

ՄԱՍՆ Բ.—Չափք, կշիռք և դրամք. Տասնորդական կոտորակք, Յատկութիւն թուոց. Հասարակ կոտորակք. Թուրքիոյ հին և նոր չափուց և կշռոց բաղդատութիւն. Նոյն չափուց և կշռոց գիներուն բաղդատութիւնք. մօտ 500 հրահանգք և գործնական խնդիրք. Աղիւսակք. 4 ղրշ.

Ա. և Բ. ՄԱՍՈՒՆՔ միասին կազմուած 7½ ղ.

ՄԱՍՆ Գ.—(Մամլոյ ներքեւ) 140

Հեղինակին հասցէն. Յովհան Գ. Փալագաշեան, Կ. Պոլիս Ուզուն Չարշը-պաշը, Փորագրիչ Երուանդ Յ. Փալագաշեանի խանութը, Թիւ 402 3—20

ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԹԵՓԷ-ՊԱՇԻ

ՀՌՉԱԿԱՒՈՐ ՁԵՌՆԱԾՈՒՆ

ԲՐՈՖԵՍԵՕՐ ՊԵՔԵՐ



Որ Եւրոպայի մէջ առաջին տեղը կը գրաւէ նմանօրինակ արուեստագիտաց մէջ և որ մէկ քանի վեհապետներէ պատուանշան ստացած է, այս անգամ մայրաքաղաքս եկած է Ռուսիայէն, ուր պատիւ ունեցած է ներկայացումներ տալու կայսերական արքունեաց առջեւ. Բրոֆ. Պեքեր եկած է իւր ամբողջ խումբով, որ կը բաղկանայ

14 անձէ՝ որոց 9 [illegible]

Բրոֆ. Պեքեր Կ. Պոլսոյ մէջ պիտի տայ միայն մէկ քանի Արտասովոր և հրաշալի ներկայացումներ, որոց առաջինը՝

Կիրակի 20/2 Նոյեմբեր, գիշերուան ժամ 8½ին.

Տոմսերը կարելի է գնել ամեն օր առաւօտեան ժամը 10էն մինչեւ իրիկուան ժամ 7.

Յայտագրին մէջ պիտի նշանակուին իւրաքանչիւր ներկայացման մանրամասնութիւնքը. 181

ԳԱՐԹԱԼԼԵԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ ՄԱՆԿԱՆՑ

Գին 3 ղրուշ

ԴԱՍԱԳԻՐՔ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԱՑ

Գին 7½ ղրուշ

Մայրաքաղաքիս գլխաւոր վարժարանաց մէջ քանակագիտութեան ուսուցիչ Գարթալլեան Երուանդ էֆէնտիի աշխատասիրած սոյն երկու թուաբանութիւնք կրթական արդի ծրագրին համաձայն պատրաստուած են եւ Պաշտօնական Ուսումնական Խորհուրդէն գնահատուելով վաւերացած և գլխաւոր վարժարանաց մէջ մուտ գտած են. ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ՝ որ իւր 40 էն աւելի վարժարանաց պէտք եղած դասագրոց ընտրութեամբ այնքան խստապահանջ է, մեծապէս գնահատելով սոյն դասագրքերն ընդունած է իւր վարժարաց մէջ եւ այս իսկ կատարեալ երաշխիք մ'է Գարթալլեան թուաբանութեանց ընտրելագոյն մեթոտին եւ կատարելութեան.

Կը գտնուի ամեն հայ գրավաճառաց քով. 152 17—20

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՆԱՍԻՊ ԱԼԻՔԵԱՆ ԷՖ.

Մայրաքաղաքիս ազգային նշանաւոր ատամնաբոյժներէն Նասիպ էֆ. Ալիքեան պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան որ այս անգամ իւր գործատեղին հաստատած է Ղալաթիա Սոսիէթէ Ժընէրալ դրամատան դիմացը Թէրեմեան խանի վերնայարկը. կը խոստանայ ակռայ քաշել առանց ցաւ իմանալու. Ակռայի ցաւերը իր նորահնար դեղերովը անմիջապէս անցընել. Ակռայ լեցնել ամենայն ամրութեամբ և հանգստութեամբ. Շինծու ակռայ շինել քաուչուքի վրայ մէկէն մինչեւ երեք ակռայի երկերկու մէճիտ և անկից վեր հատը մէյմէկ մէճիտիյէ. ոսկիի վրայ ակռայ շինել տալ ուզողներու համար ալ սակարկութիւն կ'ըլլայ հաւասար ըլլալով քաղաքիս ամենէն նշանաւոր օտարազգի ատամնաբոյժներուն կարի սուղ շինածներուն թէ՛ արհեստի թէ՛ նիւթ[illegible] թեան մասին. [illegible] օր ժամը 4էն մինչեւ [illegible] պատրաստ է այցելութիւն ընդունելու.

176 7—8

ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Բերա, Սաքըզ աղաճ, Թիւ 15, 17, 19 [Աղա ճամի]

Իր տեսակին մէջ միակ հաստատութիւն յԱրեւելս

Ամէնէն զօրաւոր և կատարելագործեալ գործիներով օժտուած

Պերճանք, հանգստութիւն և աժանութիւն ի միասին

ՏՆՕՐԷՆ՝ ՏՈՔԹՈՐ ՍԻՌԴԻՍ

Նախկին առաջին բժիշկ [illegible] հիւանդանոցի

ԼՈԳԱՐԱՆ ԵՒ ՏՈՒՇ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ

Ելեկտրականութիւն—Կախումն—Մարմնամարզ

Վարսայարդար—Մասաժ—Ոտնաբոյժ

Ջրնավերժութիւն Արանց

ԿԸ ԴԱՐՄԱՆՈՒԻՆ ԵՒ ԿԸ ԲՈՒԺՈՒԻՆ

Անարիւնութիւն, Իստերի, Ջղախտութիւն, Անկարողութիւն, Անդամալուծութիւն, Ստամոքսի հիւանդութիւնք, ևն. ևն.

ՄԷԿ ՔԱՆԻ ԳԻՆԵՐ

ԼՈԳԱՐԱՆՔ Բ կարգի 4 ղրշ.—Ա կարգի 6 ղրշ.
ՔԱՐՁ ՏՈՒՇ Բ » 3 » —Ա » 5 »
ՏԱՔ ՋՐԻ ՏՈՒՇ Բ » 5 » —Ա » 7 »

Դեղերով լոգարաններու համար գիները կը զանազանուին դեղին գնոյն համեմատ.

Բաժանորդագրութեան համար 10 % զեղչ

Դպրոցներու եւ ընտանեաց համար մասնաւոր պայմանք 35

ԻԼԱՆ

ԽԱՃԻՆԼԻ ԽԱՍՍԱՒ ՇԱՀԱՆԷ

Մաթպախը ամիրէ իչուն եէմի ալընաճագ սէպզէնին մինագասասընա պաշլանաճաղընտան թալիպ օլանլարըն բազար վէ չէհարշէնպիհ կիւնլէրի Խաճինլի Խասսայի Շահանէյէ պուլուննմալարը իլան օլունուր.

Ֆի 18 Թէշրինի էվվէլ 306

610 1—3

ԻԼԱՆ

ՊՕՍԹԱ ՎԷ ԹԵԼԷԿՐԱՖ ՆԷԶԱՐԷԹԻՆՏԷՆ

Թելէկրաֆ վէ Պօսթա Նէզարէթը ալիյէսի իչուն պու քերէ լիւզում կէօրիւնէն 30,000 քիլօկրամ էքի միլիմէթրօլըգ [illegible] թէլի իլէ 300 քիլօկրամ գալայ վէ 13,000 ատէտ բիւչիւկ մօտէլ օսմանլը իզօլաթօրը վէ 400 մէթրօ լաստիքլի թէլ մինագասասը վաղ օլունտըղընտան իշպու չէհրը Թէշրինի էվվէլին եիրմինճի Ճումա իրթէսի կիւնիւնտէն իթիպարէն 29 ընճը փազար իրթէսի կիւնիւնէ գատար մինագասաեա տէվամ վէ եէվմի մէզքիւրտէ իհալէի էվվէլիյէսի վէ ֆէրտասը սալը կիւնի տախի իհալէի գաթիյէսի իճրա գըլընաճաղը ճիհէթլէ [illegible] թալիպ օլանլարըն վէ տահա զիեատէ մալիւմաթ [illegible] իլան օլունուր.

Ֆի 17 Թէշրինի էվվէլ 1306 149

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

"ՖԻՆԻՔՍ"

Հիմնեալ ի Լոնտրա յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 17,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 27

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոյս, որք ունիմք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	ֆռանք	8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1889	»	5,604,722
Տարեկան հասոյթ » » »	»	12,773,779

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՌԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանք 6,250,000 Պահեստի դրամ ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ–Գաբու, Անանիասեան խան. 4

ՄԱԴԴՈՆԻ

ԿԻՍՀԻՒՊԼԸՐ

ՀԱՆՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՆ ՋՈՒՐ

Կալաքարային թթուուտ աղբիւր ամենամաքուր

ՍԵՂԱՆԻ ԷԱՒԱԳՈՅՆ ԵՒ ԶՈՎԱՐԱՐ ԸՄՊԵԼԻ

Հազերու, խռչափողի բորբոքմանց, ստամոքսի և աղեաց համար յանձնարարեալ։

Հայնրիխ Մադդոնի, Գարլսպատ և Վիեննա 604

Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳԱՈՒԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԼԵՐԿԻ

Ղալաթիա Պէօյիւք Միլլէթ խան, միջակ. թղթատարանի վրայի յարկը, և ի Զմիւռնիա Նվանէլիքի փողոց Թիւ 59

Այս նշանաւոր գործատունն, որ արժանաւոր համբաւ մի ստացած է ի մեզ, այս ձմրան եղանակին առթիւ իւր վաճառքներու քանակութեան վրայ յաւելում մի կ'ընէ, որ արդէն բազմաթիւ է Ֆրանսական, Անգղիական, Գերմանական և Պելճիական բերքերու զանազան տեսակներով։

Հետեւաբար իւր բուն գործարանին ապրանքներուն վրայ որք են՝ օժտի համար ամեն տեսակ ճերմակեղէնք, բանուածք, կիսագործածք, քալիքօ, քօրսէ, թաշկինակ, սեղանի պիտոյք, շապիկ, շապկընկեր, ստամանք, ֆլանել կանանց օրիորդաց և փոքր աղջկանց համար զարդագգեստներ, աւելցած է ուրիշ տեսակ անթիւ նիւթեր բոլորն ալ ընտիր տեսակէ։

Հասարակաց զարմանքը կը գրաւէ մանաւանդ այն վայելուչ և զանազան տեսակ վերարկուներն և ճաքէթներն կանանց օրիորդաց և տղայոց, որք բոլորն ալ վերջին նորաձեւութեան համեմատ ճաշակով ու չքեղութեամբ յօրինեալ են։

Յաւելում մի բրած է նաև պատրաստուած զգեստներու պատրաստութեան նորաձեւութեան վրայ որ արդէն հոխ է այնքան, և իւր ընդարձակ արհեստանոցին շնորհիւ կրնայ կատարելապէս գոհացնել բոլոր իւր յաճախորդները նոցա ճաշակին ու բաղձանաց համեմատ ի գործ դնելով ինչ որ պահանջեն։ Կը գտնուի նաև մինչեւ 16 տարեկան տղայոց համար ամեն տեսակ զգեստներ բալթօներ խիստ չափաւոր գներով։

Կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ.

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ 24

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Հըլ–Լի, Անվէրս, Կ. Պոլսոյ և Օտեսայի միջեւ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Բալերմօ	3200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Բանթէր	1700
Ապօլլօ	5500	Կիդանօ	2200	Պլաթօ	1500
Արկօ	300	Կօզօ	1500	Բօլօ	1000
Արիօսդօ	4000	Կրոտնօ	2200	Բուլիդօ	2800
Պասանիօ	3000	Հիրօ	2000	Բիւլթօ	4400
Պօրօտինօ	220	Հիտալկօ	3000	Րինալտօ	3200
Պրաւօ	2000	Հինտու	7000	Րօլլօ	3000
Պըֆֆալօ	8800	Հըմպէր	1200	Րօմէօ	3500
Գէյրօ	2600	Յայկօ	5000	Րօզարիօ	3500
Գալիպսօ	2500	Ճիւնօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլսօ	2000	Սանդիակօ	8200
Գադօ	2000	Քօլբինօ	4200	Սաֆօ	2000
Գօմօ	2700	Քօյնօ	2200	Սէրվիօ	2000
Չիքակօ	5000	Լէօ	2000	Սօրէնտօ	4300
Գլիօ	4500	Լէբանթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Գօլօրատօ	3400	Լիվօրնօ	3000	Թուրսօ	1200
Տիդօ	2500	Մալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրբէտօ	900
Տուրօ	800	Մարդէլլօ	6500	Ուրպինօ	5000
Տրաքօ	4100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Էլլինամօ	2600	Մուրիլլօ	3100	Եէտօ	3600
Էլտօրատօ	3000	Նէրօ	2000	Զէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	Տէֆֆանիա	200
Էրաթօ	2600	Օթէլլօ	5000	Ժօրժօ	200
Ֆալքօն	800	Օդրանդօ	4500	Զէրօ	140
Ֆիտօ	700	Օհիօ	2000	Մուաբիթօ	120
Էճիբշըն Մօնարք					8000
Փըրշըն Մօնարք					8000
Լիտիըն Մօնարք					8100

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՌԻՑՕ
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ խան, Ղալաթիա 23

ՅՕԴԱՑԱՒԸ ԵՒ ՄԻԶԱՆՑՔԻ ՔԱՐԸ

ՉԵՆ ԿՐՆԱՐ ԲՈՒԺՈՒԻԼ ԱՌԱՆՑ ԼԻԹԻՆԻ

Տ. ԼԸ ՓԷՏՐԻԷԼԻ ԼԻԹԻՆԷ Աղէ հատիկները, փոքր քանակութեամբ առնուելով, քիչ ատենուան մէջ կ'անհետացնեն աւազն և քարը (մէզին հետ մէկտեղ քշելով միւս անլուծելի նիւթերն ալ)։ Ասով է որ այնչափ ազդեցիկ են վերոյիշեալ հիւանդութեանց դէմ։

ԼԸ ՓԷՏՐԻԷԼ ԵՒ ԸՆԿ. ի Բարիզ, եւ դեղատանց մէջ 605

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹԵՐ

ՔՐԱՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, 117, ՆԻՒ ՊՈՆՏ ՍԴՐ. ԼՈՆՏՈՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ

ԼԸ ԺՈՒԱՅՕ ՏԸ ԼԱ ԳՈՒՌՈՆ, նոր աքանչելի հոտ
ՔՐԱԲ Է-Լ ՊԼՈՍՈՄՍ, վարդի խնձորենւոյ ծաղիկք
ԶԱՐԻՆԱ, Ռուսական գոգանոյշ հոտ
ՀՈՒԱՅԹ ԼԻԼԱՔ, ճերմակ եղրեւանի
ԳԱՐԻԼՕՖՍԻՍ, Նորելուկ
ՔԱՅՄԸ ՎԻՈԼԷԹ, հեշտաբոյր
ԱՍԴՌԷԼ, ՕՐՔԻՏԻԱ, ՋԻՊԻ, ևն.
ՀՈՒԱՅԹ ՀԷԼԻՕՏՐՕՓ

ԷՍ. ԲՈՒՔԷ
ՃՕՔԻ ՔԼԸՊ
ՕՓՕՓՕՆԱՔՍ
ՎԻԲԷԴ
ԻԼԱՆԿ-ԻԼԱՆԿ
ՄԻԼՖԼԷՕՌ
ՃԷՐՄԱԿ ՎԱՐԴ ևն.

«Քրապ Էբլ Պլոսսամ»ի առթիւ, Լոնտոնի Քուրըրդ լրագիրը կ'ըսէ. «Եղանակին ամենէն նորելուկ հոտերէն գերազանց կը համարինք Քրապ Էբլ Պլոսսամը, Լոնտոնի Քրաունի ընկերութեան. կը ծախուի թագի ձեւով խցեր ունեցող շիշերու մէջ։ Միւս բոլոր տեսակները կեղծ են.

ԼԱՎԱՆՏԸՐ ՍՈԼԹՍ, անգլիական աղեր լաւանտայով — «Վայելուչ նորելուկ արդուզարդի սեղանի համար. Լաւանտայի գերընտիր անուշահոտութիւն։ Եթէ շիշը մէկ քանի վայրկեան բաց թողուս, սենեակին օդը կը մաքրուի և կը զովանայ» Այսպէս կ'ըսէ Լոնտոնի «Տիկնանց Լրագիրը»։ Գերազանց պայման մըն է ընդդէմ գլխու ցաւերու, հարբուխի ևն։ Կը ծախուի թագի ձեւով խցեր ունեցող կանաչ շիշերու մէջ։ Միւս բոլոր տեսակները կեղծ են։

ՕՐԱԼԻՆ փոշի։ Տիկին Ատելինա Բադդի կը գրէ. «Գոհունակութեամբ կ'ըսեմ թէ ձեր Օրալինը շատ գերազանց կը գտնեմ. մորթին վրայ կը թողու շատ հաճելի տպաւորութիւն մը. ԱՏԵԼԻՆԱ ԲԱԴԴԻ։»

ՆՈՒՐԲ ՕՃԱՌՆԵՐ վայրի խնձորի ծաղիկներով Սավոն Ջարինա, Սավոն Լիլա Պլան, Սավոն Ռոզ Անկլէզ, փյոլէդ անկլէզ։ Անգլիական Քոլոնի ջուր, Անգլիական լաւանդայի ջուր, Քօլտ Քրէմ և այլն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ներկայացուցչին քով. Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ Անգլիական ընդհանուր մթերանոց, Վոյվոտա. պահականոցին քով, կայարան Թրամուէյից, 95 և 67 106

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ

Մասնաւոր բաղադրութիւն Միլանի Պրանգա եղբարց
Մատակարարք Իտալիոյ Արքայական Տան

Ոսկեայ շքադրամ՝ Բարիզի 1889ի Տիեզերական Արուեստահանդէսին մէջ.

Բազում տարւոյն յաջողութիւն յԻտալիա, յԱմերիկա, ի Հնդկաստան, յԱրեւելս և յԵգիպտոս — Շքադրամ 1885ի Անվէրսայի, 1884ի Թուրինի, 1883ի Նիսի, 1881ի Միլանի, 1888ի Մէլպուրնի և Պրուքսէլի, 1879ի Սիտնէյի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատելֆիոյ, 1873ի Վիեննայի միջազգային ցուցահանդէսներուն մէջը։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ ըմպելին է։ — Շատ բժիշկներէ կը յանձնարարուի իբր զգուշական դարմանական ճահճային երկիրներու տենդերու, տարափոխիկ հիւանդութեանց և քոլերայի։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ կը դիւրացնէ մարսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը գրգռէ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը, գլխու պտոյտը, ջղային ցաւն և մելամաղձութիւնը։

Այս ըմպելիք, բոլոր ծանօթ ըմպելիներէն և ամենէնքէն գերազանց, կ'առնուի ամեն օր ճաշէն առաջ իբր ախորժաբեր։ Ճաշէն յետոյ, ազդու մարսողական է։ Կարելի է խառնել զայն վերմութի, գինիի, սէլձի ջրոյ և խահուէի հետ։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ, ինչպէս և նոյն տան վերմութը, կը գտնուի գլխաւոր ըմպելարանաց, նպարավաճառաց և գինեվաճառաց քով։

Թուրքիոյ համար կեդրոնատեղին է ՊՈՆՈՄԻ և ՐԷՔՔԻԱ 605

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Որ ամէն երկու շաբաթ կը բանին Լիվրբուլի և Սեւ ծովու միջեւ

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4845
Էդրուրիա	7718	Պօթնիա	4531
Սէրվիա	7391	Սամարիա	2574
Օրանիա	7268	Մարաթոն	2403
Բավոնիա	5587	Ադլաս	2393
Սեֆալոնիա	5517	Սարակոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սէյթիա	4557	Բալմիրա	2144
Ալէբբօ	2143	Թրինիտատ	899
Քէտար	1876	Մորոգգօ	1855
Շէրպուրկ	1614		

Trinidad շոգենաւը, Նաւապետ Ուայդման, Օտեսայէն ասդ գալով յառաջիկայ ուրբաթ 31 հոկտեմբեր, նոյն հետայն Լիվրբուլ պիտի մեկնի։

Marathon շոգենաւը, Նաւապետ Ծ. Բինկ, Լիվրբուլէն ասդ պիտի գայ նոյեմբեր 11ին։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ս. ՃՈԼԻ գործակալ
Thomas C. Joly
Թիւ 1, Քիւչիւք Համլ փաշա խան, Ղալաթիա 10

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ
Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսէյլի և Պոլսոյ միջեւ կանոնաւորապէս բանող

Բարիզ-Լիօն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,
Ա. կարգ 250 Ֆրանք
Բ. » 178 »

Ուղղակի և արագ ուղեւորութիւն

Նաւուղեւորք, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՄՈԹԷ ԸՐԳՈՒԼ
Թիւ 17-18 Քիւչիւք Միլլէթ
Մուժանէ փողոց, Թիւ 14 21

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ—ՈՅԺ—ԿՈՐՈՎ

ՖՈՍՖՕՏԻՆ ՏՕՔԹՕՐ ԼԱԼՕՐԻ — Վերջին քսան և հինգ տարւոյն մէջ ապացուցուած է թէ այս դեղը ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ՄԻԱԿ ԴԱՐՄԱՆՆ է որ մինչեւ ցարդ գտնուած է, կատարելապէս բուժելու համար ուղեղի հիւանդութիւններն, անդամալուծութիւն, քնատութիւն, զառանցանք, առնական կարողութեան վաղահաս կորուստ, եւ առնական ոյժերու կորուստէն յառաջ եկած ամեն գործարանական խանգարում։

Կը բուժէ դժուարամարսութիւնը, ջղային եւ սրտի հիւանդութիւնները, լեարդի եւ երիկամանց հիւանդութիւններն, արեան շրջանի բոլոր խանգարումները. ընդհանուր հիւծութիւնն եւ ապառումը. կը կասեցնէ կենսական ոյժերու ո և է կորուստ որ յառաջ եկած է ո և է պատճառաւ։

Ջղային տկարութեան եւ սորա հետեւանաց մէջ այս դեղին ազդուութիւնն անմիջական եւ հիմաւոր է։ Մելամաղձութեան զգացումներն եւ ախտանիշք կ'անհետանան ճշմարտապէս հրաշալի արագութեամբ մը։

ՏՕՔԹՕՐ ԼԱԼՕՐԻ ՖՈՍՖՕՏԻՆԸ ջղային հիւթ եւ ուղեղային գոյացութիւն կ'առթէ, արեան մէջ մուծանելով կենսական ելեկտրական տարրը, ֆոսֆորն, որ ուղեղին կեդրոնական ճշմարիտ գոյացութիւնն է։ Առնական կորովը կը կենդանացունէ մարդկային ամբողջ դրութեան մէջ, մարմնոյն եւ մտքին տալով հուժկու եւ առոյգ առողջութիւն մը, այնպէս որ կարելի է բոլոր պարտականութիւնները կատարել զուարթութեամբ եւ գոհունակութեամբ։ Ախորժաբեր է, կը զտէ եւ կը հոխացնէ արիւնն եւ նոր առուգութիւն մ' կու տայ ուղեղին, ջղային դրութեան եւ մկանանց։ Իւր վերանորոգիչ ազդեցութիւնը կ'երեւնայ գործածուած առաջին օրէն իսկ, ջղային դրութեան եւ մտաւորական կարողութեանց նշանաւոր յաւելմամբ եւ կորովութեան եւ բարօրութեան զգացմամբ մը զոր վարժութիւնն հիւանդը շատոնց ի վեր [illegible] էր։ Մարսողութիւնը վերանորոգուած է։ Ախորժակը հրաշալի կերպով կ'աւելնայ։ Աղեաց պաշտօնը կանոնաւորապէս կը կատարուի։ Քունը կը լինի հանդարտ եւ կազդուրիչ։ Դէմքը կ'սկսի լենալ, շրթունքը կը գունաւորին, աչքերը շողուն կը լինին, մորթը զգայուն եւ առողջ գոյն մը կ'առնու, մաշկը պինդ կ'ամրանայ։

Զգուշացէք սուտ նմանութիւններէն։ Տօքթօր Լալօրի ճշմարիտ Ֆոսֆոտինը պարունակեալ է մէն շիշերուն մէջ որք բրիտանական կառավարութեան դրոշմը կը կրեն ու բառերով Dr. Lalors' Phosphodyne, London, England վրան փորագրուած։ Այս դեղին ունեցած յաջողութիւնն յառաջ [illegible] բազմաթիւ վտանգաւոր եւ վնասակար կեղծեր։

Մեծաքանակ եւ փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ներկայացուցչին քով,
601 Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ
Անգլիական ընդհանուր մթերանոց, Վոյվոտա. պահականոցին քով, կայարան Թրամուէյից, 95 եւ 97.

ՔԱՈՒՉՈՒՔ ՄՈՒՃԱԿ

(ԼԱՍՏԻՔ)

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՆՈՐԹՀ ԲՐԻԹԻՇ ՌԻՊԸՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

NORTH BRITISH RUBBER Co. EDINBURGH

Մեր յաճախորդներու փափաքանաց համաձայն, մեր այս տարուան քաուչուքէ մուճակներն, որք իրենց վրայ իբրեւ նշան կշիռ մը կը կրեն, խիստ ճաշակաւոր, նուրբ և հաստատուն շինուած են [illegible]։

Պոլսոյ հրապարակին վրայ երկար ատենէ ի վեր ճանչցուած է թէ մեր քաուչուքէ մուճակները կը գերազանցեն քան տարիէ ի վեր գործածուած բոլոր մուճակները։

Մեր մուճակներուս ներքին կողմը կշիռ մը և արտաքին կողմն ալ առիւծ մը պատկերը դրոշմուած է իբրեւ նշան։ Կը վաճառուին ի Պոլիս Սուլթան Համամ աղբիւրի մօտ Սեպուհ աղա Տէմիրճեանի Թիւ 47 և 49 խանութն և բոլոր քաուչուքէ մուճակավաճառողներու քով։ Կեդրոնատեղին է ի Պոլիս, Պահճէ Գաբու, Գօճաման Օղլու խան, Ճորճի Կիտրոլի Թիւ 13 մթերանոցը։ 167

La Maraviglia

ՄԱՐԱՎԻԼԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ

Յաւէտ կը հանէ խորշոմներն և ո և է կերպով յառաջ եկած սպիները։ Կ'անհետացնէ ծաղկի նշանները, ցաներն, արեւէն թողած այրուցքը և այլն։

Դէմքին կուտայ երիտասարդութեան ամեն հրապոյրները։ Գեղեցիկ սեռին ներքին խնամոց համար թանկագին գիւտ։

Թուրքիոյ համար ներկայացուցիչն է Պ. Ֆ. Պէյլիս, Ֆրէնկըլեան խան, Պոլիս։ Ընդհանուր մթերանոցն է Էտմունտ Գարուանա, Ղալաթիա, Եիւքսեք գալտըրըմ, Վոյվոտայի քով։ — Կեղծերէն զգուշանալու համար, դիմել միայն մթերանոցին։ 83

ՊՈՒՏԱՓԷՇԹԻ ՄԱՔՐՈՂԱԿԱՆ

(ՀՈՒՆԳԱՐԻԱ) ԱՂԲԻՒՐ

1885ին Հունգարիոյ Մայրաքաղաքի Տիեզերական Ցուցահանդէսին մէջ յաջողութեան, մրցման կարողութեան և արտածման մեծ մետալը ստացած է, զոր այդ ցուցահանդէսին դատաւորք նշանակած էին իբր առաջին մրցանակ մաքրողական հանքաջրոց համար։

Այս աղբիւր մեծագոյն մրցանակներն պատուած է ինն ցուցահանդէսի մէջ. կը փայլի ոսկեայ եւ արծաթեայ մետալներով. բայց աստի՝ բժշկական աշխարհին համարումը կը վայելէ իր ազդուութեան և անուշութեան զարմանալի կարողութեան համար։

ՖՐԱՆՍՈՒԱ-ԺՕԶԷՖ աղբիւրը վերջերս գրուատուած է Բարիզի բժշկական Ակադեմիայէն և Լոնտոնի համբաւաւոր Լընտըն-Հոսբիդալ հիւանդանոցէն. բաց աստի, այս ջուրն արդէն առաջին փորձով կը յայտնէ ինքզինքը։ Այս ջուրին վրայ տեղեկութիւններ ձրիաբար կը տրուին այս ջրին բոլոր մթերանոցներու, գլխաւոր դեղատանց և Պուտափէշթի գրասենեկին մէջ։

Նմանօրինակ ուրիշ ջրերու հետ շփոթութեան առաջքն առնլու համար, խոհեմութիւն է միշտ փնտռել «Ֆրանսուա-Ժօզէֆ մաքրողական Աղբիւր»ին նշանն որ կը գտնուի ամեն շիշերուն վրայ։

ՄԱՔՐՈՂԱԿԱՆ ԱՂԲԻՒՐ
FRANÇOIS JOSEPH
ՊՈՒՏԱՓԷՇԹ (ՀՈՒՆԳԱՐԻԱ)

Տիեզերական կերպով ընդունուած է՝ իւր անվրէպ ազդուութեան համար։

ԱՄԷՆ ՈՒՐԵՔ ԿԸ ԾԱԽՈՒԻ

Կը գտնուի Տ. և Մ. Մեզիքի և Ս. Քրիստիդէսի՝ Պոլիս, Ս. Գասդորիատէս և Ա. Թիթթօ՝ Ղալաթիա, Ճ. Քանզուք՝ ի Բերա։ Թուրքիոյ համար գործակալն է Պ. Ֆ. Պէյլիս, ի Պոլիս։ 34

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷ

Սկսեալ ի 1 Հոկտեմբեր (Ն. Տ.) 1890, մինչեւ նոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	6	8	10	52	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46			
	Առաւօտ												Իրիկուն												
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 30	7 ...	7 30	7 50	8 30	9 ...	9 30	10 ...	10 30	11 ...	11 30	12 ...	1 30	2 ...	2 30	3 ...	4 ...	4 30	5 ...	5 30	6 ...	6 30	...	...	...
Գում–գաբու	6 39	7 9	7 39	8 8	8 39	9 9	9 39	10 9	10 39	11 9	11 39	12 9	1 39	2 9	2 39	3 9	4 9	4 39	5 10	5 4	6 9	6 40	...	...	...
Եէնի–գաբու	6 43	7 13	7 43	...	8 43	9 13	9 43	10 13	10 43	11 13	11 43	12 13	1 43	2 13	2 43	3 13	4 13	4 43	5 14	5 44	6 13	6 44	...	...	...
Տաւուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 49	7 19	7 48	...	8 49	9 18	9 49	10 19	10 49	11 18	11 49	12 19	1 49	2 18	2 49	3 19	4 19	4 49	5 20	5 50	6 19	6 50	...	...	...
Եէտի–գուլէ	6 54	7 23	8 1	8 22	8 54	9 21	9 54	10 25	10 54	11 21	11 54	12 22	1 54	2 21	2 54	3 23	4 25	4 54	5 26	5 56	6 24	6 56	=	...	...
Մագրիգիւղ	7 9	7 33	8 12	8 39	9 6	...	10 5	10 35	11 6	...	12 6	...	2 6	...	3 5	3 36	4 35	5 6	5 39	6 9	6 35	7 9	...	...	...
Այ Ստեֆանօ	7 18	...	8 21	8 52	9 15	...	...	...	11 15	...	12 17	...	2 15	...	...	3 45	...	5 15	5 48	6 19	...	7 18	...	...	...
Քիւչիւք Չէք.	...	...	...	9 2	...	...	...	...	...	...	12 25	...	...	...	...	...	...	...	...	6 27	...	...	...	...	...
	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	45	51			
	Առաւօտ											Իրիկուն													
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք.	...	6 50	...	...	...	...	...	...	...	...	...	...	1 20	...	...	...	...	...	...	...	...	7 6	...	...	...
Այ Ստեֆանօ	6 30	7 ...	...	8 ...	8 30	...	9 30	...	...	...	11 30	...	1 30	...	2 30	...	4 ...	...	5 30	6 ...	...	7 18	...	...	...
Մագրիգիւղ	6 40	7 10	7 40	8 11	8 40	...	9 40	10 10	10 40	...	11 40	...	1 40	...	2 40	3 10	4 10	4 40	5 40	6 10	6 40	7 43	...	...	...
Եէտի–գուլէ	6 52	7 22	7 51	8 23	8 52	9 26	9 53	10 24	10 53	11 26	11 53	1 24	1 53	2 26	2 53	3 24	4 24	4 53	5 54	6 23	6 53	7 57	...	...	...
Սամաթիա	6 56	7 26	...	8 26	8 56	9 29	9 57	10 28	10 57	11 29	11 57	1 28	1 57	2 29	2 57	3 28	4 28	4 57	5 58	6 27	6 57	...	...	...	...
Տաւուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Եէնի–գաբու	7 2	7 32	...	8 32	9 2	9 34	10 3	10 34	11 3	11 34	12 3	1 34	2 3	2 34	3 3	3 34	4 34	5 3	6 4	6 33	7 3	...	...	...	...
Գում–գաբու	7 8	7 38	7 59	8 38	9 8	9 38	10 8	10 38	11 8	11 38	12 8	1 38	2 8	2 38	3 8	3 38	4 38	5 8	6 8	6 38	7 8	8 6	...	...	...
Կ. Պոլիս	7 16	7 46	8 7	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 16	11 46	12 16	1 46	2 16	2 46	3 16	3 46	4 46	5 16	6 16	6 46	7 16	8 15	...	...	...
	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մագրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բանող կառախմբոց մէջ միայն ընդունուին. Թիւ 1 և 2 կառախումբերն ունին Ա. Բ. և Գ. կարգի վակոններ. միւս կառախումբերն ունին միայն Բ. և Գ. վակոններ։ 15

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐԻ